



# ՏԱՐԵԳՐՔՈՅԿ

ԵՒ

## ՅԱՅՏԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ  
ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԵՒ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 15ՐԴ

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Յունիս 15-18, 1933

WORCESTER, MASS.

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ  
ԵՒ ՀՈՎԻՒՆԵՐՈՒՆ**

Սիրելիք ի Քրիստոս,

Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան 32-րդ եւ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Տասնեւհինգերորդ Տարեկան Համաժողովը պիտի գումարուի յառաջիկայ Յունիս 15-18, Ուտրի Հայ Մարտիրոսաց Եկեղեցւոյ մէջ, **Ormond st. Worcester, Mass.**

Գործադիր Մարմնոյս անձանօք չեն մեր եկեղեցիներու վրայ ննշող տնտեսական անձուկ պայմանները. ամէնքս ալ «միեւնոյն նաւուն մէջն ենք»: Բայց որքան դուրսի պայմանները խստանան, նոյն համեմատութեամբ պէտք է որ մեր ներքին դիմադրական ոյժերն օր ըստ օրէ գօրանան: «Մենք աշխատելու ենք չընկնիլ տնտեսական տագնապի այս ժամանակաւոր ննշումէն, եւ նախկին հաւատաւոր խանդավառութեամբ հաւաքուելու ենք յՈւտրըր, ընելու այս Համագումարը ԳՈՐԾԻ, ՀՈԳԵՒՈՐ ՆԵՐՇՆԶՈՒՄԻ եւ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԵԱՆ միջոց, մեր ընդգրկած վսեմ գործը եւ հետապնդած նուիրական նպատակը ազդուարդիւն ընծայելու համար. որովհետեւ մեր եկեղեցիները մեր խանդավառութեան կարօտը կը քաշեն, մեր համայնքները մեր ներշնչուելուն ալընդէտ կը սպասեն:

Օ՛ն, ուրեմն, ամէն գնով պատրաստուիմք զիրար դիմաւորելու եւ գործակցելու, իբրեւ միեւնոյն բանակի զինուորներ միեւնոյն հասարակաց դատին շուրջ մեր պայքարը շարունակելու համար: «Մեր տարեկան համաժողովները առիթը կ'ընծայեն մեզի փոխադարձաբար կրկնելու, նորոգելու մեր հաւաստիքները թէ իբրեւ գործակիցներ, յօժար ու պատրաստ ենք զիրար քաջալերելու, որպէս զի մեզի յանձնուած գործը կարենանք արժանաւորապէս կատարել»:

Ա. Ա. ԿԷՕՐԿԻԶԵԱՆ  
Քարտուղար

Ի դիմաց Գործադիր Մարմնոյ  
Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆ  
Նախագահ



ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- 1.- Վեր. Ա. Պ. Հիւսեան — Նախագահ
- 2.- Վեր. Գ. Պետրոսեան — Փոխ-նախագահ
- 3.- Վեր. Ա. Ա. Կէօրկիզեան — Քարտուղար
- 4.- Տիար Յ. Մ. Փիլիպպոսեան — Գանձապետ
- 5.- Վեր. Ս. Մ. Մխիթարեան
- 6.- Տէր. Ե. Հատիւեան

## ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1932 Յունիս — 1933 Յունիս

Վեր. Ա. Պ. Հիւսեան, Նախագահ  
Վեր. Գ. Պետրոսեան, Փոխ-նախագահ  
Վեր. Ա. Ա. Կէօրկիզեան, Քարտուղար  
Տիար Յ. Մ. Փիլիպպոսեան, Գանձապետ  
Վեր. Ս. Մ. Մխիթարեան  
Տիար Յ. Ե. Աշոտեան

### ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԵՐ

#### ՅԱՆՁՆԱՐԱՐԱԳՐՈՅ

Միութեան Փոխ-նախագահը, Քարտուղարը  
Արձանագրիչը

#### ՈՐՈՇՄՆԱԳՐԵՐՈՒ

Վեր. Ե. Գ. Ճըրմազեան Պատ. Ա. Խ. Երամեան  
Տիար Յ. Գրիգորեան

#### ԸՆՏՐԱԿԱՆ

Վեր. Յ. Խաչատուրեան Վեր. Ա. Պաղտիկեան  
Տիար Գ. Ս. Նահիկեան

Քարոզիչ

Տարեկան պաշտաման առքիւ

Վեր. Յ. ԳԱՌԹՕԶԵԱՆ

Քարոզիչ

Հաղորդութեան պաշտաման առքիւ

Վեր. Ա. ՊԱՂՏԻԿԵԱՆ

## ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՏՆ ՈՒ ՀՈՎԻՒՆԵՐԸ

- |  |  |
|--|--|
| <p>Թրոյի Միացեալ Հայ Աւետ. Գողգոթա եկեղեցի<br/>Վեր. Ե. Գ. ձԸՐՆԱԶԵԱՆ, Հովիւ</p> <p>ա) Լորէնսի Հայ Աւետ. Բէթէլ եկեղեցի<br/>բ) Հէյվըրհիլի Հայ Աւետ. Միւրն<br/>Վեր. Ա. Պ. ՀԻԻՍԵԱՆ, Հովիւ</p> <p>Նիւ Եորքի Հայ Աւետ. եկեղեցի<br/>Վեր. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ, Հովիւ</p> <p>ա) Շիֆակոյի Հայ Աւետ. եկեղեցի<br/>բ) Ուէսթ Փուլմընի Հայ Աւետ. Միւրն<br/>Վեր. Հ. Յ. ԱՇՃԵԱՆ, Հովիւ</p> <p>ա) Ուէսթ Նիւ Եորքի Հայ Երիցական եկեղ.<br/>բ) Փէթըրսընի Հայ Երիցական Միւրն<br/>Վեր. Ա. Ա. ԿԵՕՐԿԻԶԵԱՆ, Հովիւ</p> <p>ա) Ուսքըրի Հայ Մարտիրոսաց եկեղեցի<br/>բ) Հուայթնսվիլի Հայ Աւետ. Միւրն<br/>Վեր. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հովիւ</p> <p>Նիւ Պրիքընի Ֆըրսթ Չըրչի Հայկական Բաժին, Նիւ Պրիքըն, Գըն-<br/>ՏՐ. Ե. Յ. ՀԱՏԻՏԵԱՆ, Գարագիչ</p> <p>Նիւպրիփորքի Հայ Աւետ. Միւրն<br/>(Բաց կը մնայ)</p> <p>Ուոֆիկընի Հայ Աւետ. եկեղեցի<br/>Վեր. Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, Հովիւ</p> <p>ա) Լինի Հայ Աւետ. Միւրն<br/>բ) Չըլսիի Հայ Աւետ. Համայնք<br/>ՊԱՏ. Ա. ԵՐԱՄԵԱՆ, Գարագիչ</p> <p>Պոստոնի Ա. Հայ Աւետ. եկեղեցի<br/>Վեր. Ս. Յ. ՀԱԼԼԱՃԵԱՆ, Հովիւ</p> <p>Պոստոնի Հայ Աւետ. Կրիկեան եկեղեցի<br/>Վեր. Ա. Թ. ՊԱՂՏԻԿԵԱՆ, Հովիւ</p> <p>ա) Պինկհեմփթընի Հայ Աւետ. Միւրն</p> | <p>Թրոյ, Ն. Ե.</p> <p>Լորէնս, Մէսս-<br/>Հէյվըրհիլ, Մէսս-</p> <p>Նիւ Եորք, Ն. Ե.</p> <p>Շիֆակո, Իլլ-<br/>Ուէսթ Փուլմըն, Իլլ-</p> <p>Ուէսթ Նիւ Եորք, Ն. Ճ.<br/>Փէթըրսըն, Ն. Ճ.</p> <p>Ուսքըր, Մէսս-<br/>Հուայթնսվիլ, Մէսս-</p> <p>Նիւպրիփորք, Մէսս-</p> <p>Ուոֆիկըն, Իլլ-</p> <p>Լին, Մէսս-<br/>Չըլսի, Մէսս-</p> <p>Գէյմպրին, Մէսս-</p> <p>Պոստոն, Մէսս-</p> <p>Պինկհեմփթըն, Ն. Ե.</p> |
|--|--|

- |   |   |
|---|---|
| <p>բ) Սիրաֆիւզի Հայ Երիցական Միւրն<br/>Վեր. Յ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Հովիւ</p> <p>Սէլիմ Տիփոյի Հայ Աւետ. Արարատ եկեղեցի,<br/>Վեր. Ս. Մ. ՄԵԻԹԱՐԵԱՆ, Հովիւ</p> <p>Տիքրոյքի Հայ Ժողովական եկեղեցի<br/>Վեր. Յ. ԳԱՌԹՕԶԵԱՆ, Հովիւ</p> <p>Փրավիտէնսի Հայ Աւետ. Եփրատ եկեղեցի<br/>Վեր. Ն. Գ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, Հովիւ</p> <p>Ֆիլատէլփիոյ Նահատակաց Միացեալ եկեղ.<br/>Վեր. Յ. Մ. ՏԵՓՈՅԵԱՆ, Հովիւ</p> <p>Ֆիլատէլփիոյ Հայ Աւետ. Մերոսիստ եկեղ.<br/>Վեր. Մ. Բ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, Հովիւ</p> <p>Գիլվիէնսի Հայ Աւետ. Միւրն<br/>(Հովիւ չունի)</p> | <p>Սիրաֆիւզ, Ն. Ե.</p> <p>Սէլիմ Տիփո, Ն. Հ.</p> <p>Տիքրոյք, Միչ.</p> <p>Փրավիտէնս, Բ. Ա.</p> <p>Ֆիլատէլփիա, Փա-</p> <p>Ֆիլատէլփիա, Փա-</p> <p>Գիլվիէնս, Օհայօ</p> |
|---|---|



# ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆՈՅՆ

Գործադիր Մարմինս որ այս տարի 7 հոգի է կը բաղկանայ, վեց պաշտօնական եւ չորս անպաշտօն նիստեր գործարած է :

Երբ ներկայ Գործադիր Մարմինը գործի ձեռնարկեց, դանձին մէջ կը գտնուէր \$1.03 միայն, ինչ որ բաւական դժուարութեան մասնեց զինքը :

Միութեան ընթացիկ ծախքերուն համար եկամուտի հետեւեալ համեմատական բաշխումի սակը որդեգրուած եւ վարչութիւնը դայն ի գործ դրած է :

10% Դիւանական ծախքերուն

10% Տպագրական ծախքերուն

40% Ճանապարհածախս

40% Քարտուղարութեան

Համաձայն նախորդ Տարեփոփոխի յանձնարարութեան, Յանձնախումբի մը միջոցաւ նոր Սահմանադրութիւն մը մշակած է եւ զրկած բոլոր եկեղեցիներուն անոնց նկատառման ու վաւերացման ենթարկելու, որպէս զի շուտով տպագրութեան յանձնուի առ ի գործադրութիւն :

Ձեռնարկած է Միութիւնը Incorporated ընել որ հեղինակութիւն ունենայ Հովիւներու ձեռնադրութիւններ կատարել, եկեղեցական կալուածներու իրաւական տէրը ճանչցուիլ, անոնց փոխանցումներ կատարել, եւ այլն :

Դիմումներ կատարեց Methodist եւ Presbyterian Home Mission-ներուն անոնց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը խնդրելու դաշտին վրայ Աւետարանիչ մը պահելու համար, ինչ որ դժբաղդարար չիրականացաւ ներկայ տնտեսական տապանալին հետեւանքով :

Միջ-Միութեանական շարժումը իրականացնելու համար նկատի առած է նախորդ Գործադիր Մարմնոյ կողմէ եղած ձեռնարկը եւ դանադան Միութիւններէ եկած նամակները, եւ դրած է անոնց պատկան Գործադիր Մարմիններուն որ հաճին տալ իրենց զխտողութիւններն ու թերազրութիւնները, որպէս զի կարելի ըլլայ որոշ ու դրական եզրակացութեան մը հասնիլ այս յոյժ կարեւոր հարցի մասին :

Ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս, Աւետարանչականի Քարտուղարին հետ գործակցաբար, կազմակերպեց մեր Հովիւներու համար վերնատան ժողով (Re-treat) մը Հարթֆըրտի մէջ, իբրեւ Արեւելեան Շրջանի կեդրոնական վայր, եւ համանման ժողով մըն ալ Տիթ-րոյթի մէջ իբրեւ Միջին Արեւմուտքի կեդրոնավայրը, ուր ներկայ եղաւ նաեւ Միութեան Նախագահ Վեր. Ա. Պ. Հիւսեան :

Այս առիթով Միութեան նախագահը այցելեց նաեւ Շիքսհոյի եւ Ուոքֆիլդի մեր եկեղեցիներուն եւ քարոզեց անոնց բեմերէն :

Փոխ-Նախագահի եւ Քարտուղարի ստորադրութեամբ կոչ մը ուղղեց Աւետ. եկեղեցիներուն, համայնքին եւ առ հասարակ Հայ ժողովուրդին նիւթական օժանդակութիւն ընծայելու Լորէնսի Հայ Աւետ. Բեքել եկեղեցիի կիսաւարտ շէնքին լրացման համար :

Մասնաւոր հրահանգով մը թերազրեց եկեղեցիներուն որ Thanksgiving-ի առթիւ եղած կիրակնօրեայ պաշտամունքի պնակներու հասոյթը Միութեանս ընթացիկ ծախքերուն յատկացուի : Հրահանգեց նոյնպէս մեր եկեղեցիներու Հոգաբարձութիւններուն որ ատենը անգամ մը իրենց եկեղեցիներէն հրահանգիչ ու օգտակար տեղեկութիւններ հաղորդեն վարչութեանս Դիւանին՝ զանոնք պարբերաբար Հայ թերթերու մէջ տպագրել տալու համար առ ի քաջալերութիւն Աւետարանական եկեղեցիներուն : Նմանապէս հրահանգեց մեր եկեղեցիները առան-

ձինն, կամ Հայ Առաք. Եկեղեցիներու հետ, տօնել երիւմ-  
եան Հայրիկի մահուան 25-ամեակը:

Մեր Աւետարանական համայնքներու մէջ Աւե-  
տարանական գիտակցութիւնը մշակելու եւ խորունկցնե-  
լու առաջադրութեամբ՝ ձեռնարկեց շարք մը այցելու-  
թիւններ տալ մեր եկեղեցիներուն նիւ Ինկլընտէն սկըս-  
եալ: Իւրաքանչիւր ամսուան վերջին Կիրակին յատկաց-  
ուեցաւ այս նպատակին: Գործադիր Մարմինս այս նպա-  
տակաւ այցելութիւններ տուաւ գրեթէ ամիսն անգամ մը  
Պոստոն՝ Ա. Հայ Աւետարանական, Փրավիտէնսի «Եփ-  
րատ», Նւտրրի «Մարտիրոսաց», Լօրէնսի «Բեթել»,  
Մէյլլմի «Արարատ», Ուէսթ նիւ Եօրքի եւ Փէթըրսընի  
Հայ Երիցական, Թրօյի «Գողգոթա», նիւ Եօրքի Հայ  
Աւետարանական, Ֆրլատէլֆրոյ «Նահատակաց» եւ Մէ-  
թոսիսի եկեղեցիներուն (միացեալ) նաեւ Չըլսիի, Հէյ-  
վըրհիլի եւ Հուայթընսիլի միջըններուն: Այս այցելու-  
թիւնները մեծ ոգեւորութիւն եւ խանդավառութիւն ըս-  
տեղծեցին եկեղեցիներու նմէջ:

### ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ

Քանի որ Միջ-Միութենական համադորձակցութեան  
ինդիքը երեւան եկաւ անցեալ տարուրնէ յետէ, Գործա-  
դիր Մարմինս յարմար սեպեց ունենալ պաշտօնական այն-  
պիսի երգ մը, որ խոսացնէր իր մէջ Աւետարանական Մի-  
ութեան գաղափարականը, եւ ընդունելի ըլլար բոլոր Ա-  
ւետարանական Միութիւններուն ալ: Առ այս գըր-  
ուեցաւ Քալիֆորնիոյ, Միւրիոյ եւ Յունաստանի Աւետ.  
Միութիւններու ինչպէս նաեւ «Նոր Աւետարեի» ի խմբա-  
գըրութեան իրենց շրջանակներուն մէջ յարմար ու կա-  
րող անձերու յանձնել հեղինակութիւնը այսպիսի երգի  
մը եւ զրօկել զայն Գործադիր Մարմնոյս, անոնցմէ  
յարմարագոյնը ընտրելու եւ զայն գործածելու իբրեւ Ա-  
ւետ. Միութիւններու պաշտօնական երգը:

### ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ 100-ԱՄԵԱԿԸ

Գործադիր Մարմինս նկատելով որ 1934-ին կը լրա-  
նայ Հայ Աւետարանական շարժման 100-ամեակը, որո-  
շած է զայն փառաւորապէս տօնակատարելու հարցը յա-  
ջորդ տարեփոփոխի նկատառութեան յանձնել, իսկ մինչ  
այդ՝ այս ուղղութեամբ պատրաստութիւններ տեսնել,  
նիւթեր հաւաքել եւ Ամերիկահայ եկեղեցիներու պատ-  
մութիւնն եւս այդ առթիւ լոյս ընծայել:



## ԿԱԶՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

### Խ Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ն (BOARD OF DIRECTORS)

ՎԵՐ. Ա. Պ. ՇՄԱՒՈՆԵԱՆ, ՎԵՐ. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՎԵՐ. Խ. Կ. ՊԵՆՆԵԱՆ, ՎԵՐ. Յ. Մ. ՏԵՓՈՅԵԱՆ, ՏԻԱՐ Կ. Թ. ՓՈՒՇՄԱՆ:  
ՏԻԱՐ Գ. ԳԱՐԲԻԼԵԱՆ, ՎԵՐ. Մ. Թ. ԳԱԼԱՅՃԵԱՆ, ՏԻԱՐ Ա. Կ. ԹԵԼՖԵԱՆ, ՎԵՐ. Ս. Յ. ՀԱԼԱՅՃԵԱՆ, ՏԻԱՐ Թ. ԳԱՐԵԳԻՆ ՓՈՒՇ-ՄԱՆ:

ՏՈՒԹ. Ն. ԻՇԽԱՆԵԱՆ, ՏԻԱՐ Տ. ՄԵՇԻԿԵԱՆ, ՎԵՐ. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ, ՏԻԱՐ Գ. ՍԻՎԱՍԼԵԱՆ, ՏԻԱՐ Տ. ՔԷՕՀՆԵԼԵԱՆ:

### Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ն (EXECUTIVE COMMITTEE)

ՏԻԱՐ Կ. Թ. ՓՈՒՇՄԱՆ	Նախագահ
ՏԻԱՐ Գ. ԳԱՐԲԻԼԵԱՆ	Փոխ-Նախագահ
ՏԻԱՐ Տ. ՔԷՕՀՆԵԼԵԱՆ	Ատենադպիր
ՏԻԱՐ Ա. Կ. ԹԵԼՖԵԱՆ	Գանձապետ
ՎԵՐ. Մ. Թ. ԳԱԼԱՅՃԵԱՆ	Խորհրդակամ
ՎԵՐ. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ	Խորհրդակամ
ՏԻԱՐ Տ. ՄԵՇԻԿԵԱՆ	Խորհրդակամ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԽՈՐՀՈՒՐԳ (EXECUTIVE COUNCIL)

#### ԱԼԵՏԱՐԱՆՀԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՆԵՐ

ՏԻԱՐ Կ. Թ. ՓՈՒՇՄԱՆ	Նախագահ
ՎԵՐ. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ	Քարտուղար
ՎԵՐ. Մ. Թ. ԳԱԼԱՅՃԵԱՆ	Խորհրդակամ
ՏՈՒԹ. Ե. Յ. ՀԱՏԻՏԵԱՆ	Խորհրդակամ
ՎԵՐ. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Խորհրդակամ



ԱԻԵՏԱՐԱՆԶԱԿԱՆԻ ՎԱՐԶՈՒԹԻՆ

- 1.- Տիկին Կերթմեան
- 2.- Վեր. Ա. Ա. Պետիկեան
- 3.- Տֆր. Ե. Հատիտեան — Ընդհ. Քարտուղար
- 4.- Տիար Ա. Կ. Թելֆեան — Գանձապետ
- 5.- Վեր. Մ. Թ. Գալայճեան
- 6.- Տիար Տ. Մեծիկեան

Ամերիկեան Պորտի Ներկայացուցիչներ  
 MISS MABEL E. EMERSON  
 REV. CARL M. GATES  
 MR. FREDERICK A. GASKINS  
 REV. ERNEST W. RIGGS

Խորհրդական  
 Փոխ-Նախագահ  
 Խորհրդական  
 Գանձապահ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
 (GENERAL SECRETARY)  
 ՏՈՒԹ՝ ԵՐՈՒԱՆԴ Յ՝ ՀԱՏԻՏԵԱՆ



**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆԸ Ի՞ՆՉ Կ'ԸՆԷ**

ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ

1929 Յուլիս 1-էն Յունիս 30, 1930

ՍՈՒՐԻԱ

24 Հովիւներու թռչակ կը վնարէ՝ տարեկան համագումարը(1)	\$9,793.00
13 Աւետարանչուհիներու կը վնարէ տարեկան(2)	1,842.00
19 նախակրթարաններու ուսուցիչներուն թռչակներուն ի նպաստ կը վնարէ	4,793.00
Աստուածաբանական ուսանողներու օգնութիւն, տարեկան	600.00
Հովիւներու ամառնային դպրոցի ծախսոց առ հաշիւ	220.00
Միութեան ժողովին ընթացիկ ծախսոց առ հաշիւ	125.001
Դաշտին գանազան պէտքերուն համար	500.00
<b>Համագումար Սուրիոյ դաշտին համար</b>	<b>\$17,873.00</b>

**ՅՈՒՆԱՍՏԱՆ**

7 Հովիւներու թռչակ կը վնարէ՝ տարեկան համագումարը(1)	\$3,588.00
6 Աւետարանչուհիներու կը վնարէ տարեկան(2)	946.00
4 նախակրթարաններու ուսուցիչներուն թռչակներուն ի նպաստ կը վնարէ	3,522.00
<b>Համագումար Յունաստանի դաշտին համար</b>	<b>\$8,056.00</b>
<b>Կ. ՊՈՂԻՍ</b>	
5 Հովիւներու թռչակ կը վնարէ՝ տարեկան համագումար(1)	\$1,170.00
3 Աւետարանչուհիներու կը վնարէ տարեկան(2)	450.00
Մէկ նախակրթարանի ուսուցիչներուն թռչակներուն ի նպաստ կը վնարէ	420.00
Դաշտին գանազան պէտքերուն համար	120.00
<b>Համագումար Կ. Պոլսոյ դաշտին համար</b>	<b>\$2,160.00</b>

**ՖՐԱՆՍԱ**

Քարոզիչներու եւ աստուածաբանական ուսանողներու համար կը վնարէ տարեկան	\$1,000.00
<b>ԿԻՊՐՈՍ</b>	
Մէկ աւետարանիչի տարեկան նպաստ(19)	\$240.00
ՏԵՂԱԿԱՆ Ընդհանուր Ծախսոց(2)	\$1,000.00
ԸՆԹԱՑԻԿ Տարուան Ամբողջական Պիւտնէն(3)	\$30,530.00

(1) Հովիւներէն ոմանց թռչակը մէկ մասամբ, ընդհանրապէս մեծուոյն մասամբ, իսկ ոմանց ալ ամբողջութեամբ կը վնարուի: Մէկ անձի համար վնարուած բարձրագոյն գումարը տարեկան \$960 է, իսկ նուազագոյնը՝ \$252, ընդհանրապէս 400-էն վեր:  
 (2) Աւետարանչակներու թռչակը ամբողջութեամբ կը վնարուի, միջին հաշուով \$150:  
 (3) Այս գումարին 10,000 տոլար կը հայրաքիչ Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը իսկ մնացեալն՝ Ամերիկեան Պորտը: Մատակարարիչ խան մարմինը, որ Գործադիր Խորհուրդը (*Եկզէքիւ-թիվ Քասուսիւր*) կը կոչուի, կը բաղկանայ ինն անձերէ, որոնց հինգը Աւետարանչականը կը ներկայացնէ, չորսը՝ Պորտը:

Ասիկա քէն 1930 տարուան «ամփոփ պատկերն» է, սակայն կըրնայ ծառայել ընթացիկ տաշտոյ եւս գործունէութեան վրայ յոյս մը պիտելու:





## ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Հայ Աւետարանչականը այս տարի կ'ըլլայ տասնը-  
հինգ տարեկան :

Ընկերակցութեան նպատակը .—

“To promote the general interests and agencies of Armenian Evangelical churches in the United States and abroad; to carry on such religious, educational, literary and philanthropic and other work, including the establishing and aiding of Armenian Evangelical Churches; to acquire in any and all lawful ways, including by bequest and devise, both personal and real property, to hold trust funds, and such other funds and property as may from time to time come into its possession; and to do each and everything necessary or incidentally to any and all of the foregoing objects, and which are not inconsistent with the laws of this (New York) State or the principles of Evangelical Christianity.”

Ընկերակցութիւնը իր նպատակը դործադրած է ցարդ  
հետեւեալ կերպով .—

Հովիւներու եւ Աւետարանիչներու եւ ուսուցիչներու  
թոշակ, եկեղեցիներու շինութեան կամ նորոգման հա-  
մար օգնութիւն, կրօնական եւ դաստիարակչական հրա-  
տարակոթիւններ, Աստուածարանական ուսանողի մը  
Scholarship, գիրքերու եւ պարբերաթերթերու հայթայ-  
թում դաշտի հովիւներու, որբերու դաստիարակութիւն,  
ministerial retreat-ներ եւ այլ հովուական հաւաքոյթ-  
ներ կարելի դարձնել, Լրատուի հրատարակութիւնը,  
Ընդհանուր Քարտուղարներու ներքին գործունէութիւն-  
ները, Ամերիկայի մէջ աւետարանչական գործ, այլեւայլ  
նուէրներ կոչերու ի պատասխան :

Ասոնց համար դանձէն ելած է մօտաւորապէս 100.000  
տոլար :

Ծրագրուած եւ որոշուած բայց չիրագործուած գոր-  
ծեր .— Կէս միլիոն տոլարի Martyrs' Memorial Fund-ի  
մը գոյացումը, նոր երգարանի մը եւ Կիրակնօրեայ Դըպ-  
րոցի դասագիրքերու հրատարակութիւն, Աստուածարա-  
նական ձեռնարանի մը մէջ Հայ Փրոֆէսորի մը թոշակը  
ճարել :


Հայ Աւետարանչականը գործեր ունեցած է հետեւ-  
եալ դաշտերու մէջ .— Հայաստան, Սուրիա, Յունաս-  
տան, Պոլիս, Պուլկարիա, Կիպրոս, Ֆրանսա, Հարաւա-  
քին Ամերիկա եւ Միացեալ Նահանգներ : Այս դաշտերը կը  
պարունակեն տասը հազարի մօտ աւետարանական հա-  
յութիւն մը : Աւետարանչականի կարելի դարձուցած ծա-  
ռայութիւնները կը տարածուին յարանուանական սահ-  
մաններէն դուրս ալ :

Ներկայիս քառասունի մօտ եկեղեցի, քսան դպրոց եւ  
քսան աւետարանչուհիներ կ'օգտուին Աւետարանչակա-  
նէն :

Աւետարանչականը ունեցաւ չորս Ընդհանուր Քար-  
տուղարներ՝ Վեր. Մ. Թ. Գալաթեան (1918-1919), Վեր.

Ա. Ա. Պետրիկեան (1920-1927, 1929), Վեր. Մ. Կ. Փա-  
փաղեան (1928) եւ Տր. Երուանդ Հատիտեան (1930-32) :

Մինչեւ 1927 Աւետարանչականը գործեց ինքնազը-  
լուխ : 1928-ին խաչածեւոմները արգիլելու եւ աւելի ար-  
դիւնաւորութիւն ու իննյոզութիւն ապահովելու համար  
գործակցութեան պայմանագիր մը կնքուեցաւ Ամերիկե-  
ան Պորտի հետ, դպրոցական եւ եկեղեցական գործերու  
եւ նպաստներու մատակարարութիւնը յանձնուելով Եր-  
կու կողմի ներկայացուցիչներէն բաղկացած յանձնա-  
խումբի մը որ կը կոչուի Գործադիր Սորհուրդ (Execu-  
tive Council) : Այս գործակցութիւնը կը շարունակուի  
այժմ, բայց կրնայ խզուիլ երկուքէն սեւէ մէկուն փա-  
փառովը :



## The Mid-Atlantic Inter-State Union

### ARMENIAN YOUNG PEOPLE'S CHRISTIAN SOCIETIES

(Organized Nov. 22, 1925)

Dicran H. Keuhnelian, President,	West New York, N. J.
Mary Bekmejian, Vice-President	Philadenphia, Pa.
Lily Kiretchjian, Vice-President	New York City
Florence Tashjian, Vice-President	Paterson, N. J.
Lydia Hartunian, Secretary	Philadelphia, Pa.
Peter H. Kafafian, Treasurer	Paterson, N. J.
John A. Reed, Ex-Office	Camden, N. J.
Rev. A. A. Bedikian, Pastoral Advisor	New York City

The Middle Atlantic States Union was organized under the leadership of Mr. G. Diran Minassian of New York. The first convention was held in New York on Nov. 22, 1925. Since that date we have had yearly conventions held as follows:

1926	Philadelphia
1927	Troy
1928	West New York
1929	New York
1930	Philadelphia
1931	West New York
1932	Philadelphia

The next 1933 convention will be held in New York in the beginning of November.

Up to 1930 the conventions were held for one day; usually Sunday but since that time we began to hold two-day conventions beginning Saturday afternoon and lasting until Sunday evening.

In the beginning the Union was organized with societies from the following churches:

Troy, New York, West New York and the two in Philadelphia, making a total of 5 societies. Since then, however, the society in Troy has been disbanded and a Junior Christian Endeavor has been organized. We were able under our guidance to organize a society in Paterson and they in 1931 were officially admitted into our Union.

The present total membership is about 125.

Since the organization of the New England Union, also under our guidance, we are glad to say that steps are now being taken to have a Union of these two organizations under one leadership with a central executive committee. However, each unit, that is, the New England and Middle Atlantic States Union would still have their own local executive committees.

The Union has always since its organization asked the churches to set aside one week during the year as Inter-state Union Week. These weeks have proved very necessary because at that time the congregations really find out what the young people in their church are doing.

## The New England Inter-State Union OF ARMENIAN CHRISTIAN ENDEAVOR SOCIETIES

### EXECUTIVE COMMITTEE

Zenas J. Kevorkian, President	Providence, R. I.
Alberta A. Kevorkian, Vice-President	Jamaica Plain, Mass.
Gabriel Stepanian, Vice-President	Methuen, Mass.
David Johnson, Vice-President	Worcester, Mass.
Dorothy Gostanian, Secretary	Providence, R. I.
George Kachadorian, Treasurer	Salem, N. H.
Arthur Bartigian, Publicity	Providence, R. I.
Edward Chopoorian, Lookout	Lawrence, Mass.
Rev. A. B. Hussian, Pastoral Advisor	Lawrence, Mass.

This Union was organized in October, 1932 in the Armenian Martyrs Church, Worcester, Mass. The Societies in the following churches compose the Union:

Salem Depot, N. H. Armenian Ararat Church  
Christian Endeavor  
Lawrence, Mass, Bethel Armenian Church  
Christian Endeavor  
Boston First Armenian Evangelical Church  
Christian Endeavor  
Boston Cilician Armenian Church  
Christian Endeavor  
Worcester Armenian Martyr Church  
Christian Endeavor  
Providence Armenian Euphrates Church  
Christian Endeavor.

The Union has 180 members all together.

The Union has its annual one day convention. The next to be held in Boston, First Armenian Evangelical Church, October, 1933.



ԱՆՏՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՐԷՆՆԵՐԸ

## ՎԵՐ ԿՈՍՏԱՆ ՄՈՒՄՃԵԱՆ



Ծնած էր Մարաշի մէջ, ուր իր նախնական կրթութիւնը ըստանալէ վերջ աւարտած էր Այնթապի Կեդրոնական Գալէճի եւ Մարաշի Աստուածաբանական Դպրոցի ընթացքը: Աւետարանի քարոզութեան նըւիրած էր ինքզինքը 50 տարիներէ ի վեր:

Եւրոպ, Եկէրէպահան, Սիս, Թարսուս, Մարաշ եւ Զէյթուն հովուական պաշտօններ վարած էր:

Ամերիկա եկած էր 1897-ին եւ պաշտօնավարած էր Փաթրըրնի, Ուէսթ Հոյօքընի, Թրօյի, Հէյլըրճիլի եւ

Նիւպրիփօրթի Աւետ. համայնքներուն մէջ, վերջին երկու տեղերը վերջին 15 տարիներէ ի վեր:

Իր յաւիտենական հանգիստը մտաւ ներկայ տարուան Ապրիլ 8-ին, 80-ամեայ խոր ծերութեան մէջ, որ սակայն կը պահէր երիտասարդական իր կորովը:

Յուդարկաւորութեան կրկին պաշտամունքներ կատարուեցան Նիւպրիփօրթ Ապրիլ 9-ին եւ Պոստոն, Ա. Հայ Աւետ. Եկեղեցւոյ մէջ Ապրիլ 11-ին ի ներկայութեան 5 հայ եւ 7 Ամերիկացի հովիւներու:

Անոր մահուամբ մեր եկեղեցիները կորսնցուցին իրենց յարգելի «Բարան»:

Անիկա ապրեցաւ այնպիսի կեանք մը որ յիբաւի արձագանդն էր Մեծ Առաքեալի կողին «Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի, այսուհետեւ կը մնայ ինձի արդարութեան պատկը»:

# ՅԱՅՏԱԳԻՐ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԵՍՈՒՆ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

ՆԻՍՏ Ա.

Յունիս 15, Հինգշաբթի, Կէսօրէ ետք

2.00 Բացում

Գոհաբանական Պաշտամունք վեր. Ս. Մ. Մեծարեան

2:30 Ուղերձ վեր. Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆ, Նախագահ

2:40 Գործի ժողով

1.- Անուանակոչութիւն (Roll Call)

2.- Անուանումն Յանձնախումբերու

ա. Որոշմագրերու եւ Խնդիրներու

բ. Անուանիչ

գ. Կարգադիր եւ Արձանագրիչ

դ. Ընտրութիւն Համաժողովի Օգնական Քարտուղարի

3.- Ընթերցում վերջին Համաժողովի Արձանագրութեանց — Քարտուղար վեր. Ա. Ա. Կէօրկիզեան

4.- Ընթերցում Տեղեկագրերու

ա. վարչութեան — Քարտուղարը

բ. Ելեւմուտքի — Գանձապահը Տիար Յ. Մ. Փիլիպպոսեան

5.- Դիտողութիւններ եւ Թելադրութիւններ

6.- Ծանուցումներ

5. 5.10 Փակում — Երգ եւ Աղօթք վեր. Ա. Յարութիւնեան

6.00

— ձԱՇ —

— 22 —

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հինգշաբթի երեկոյ, Ժամը 8:00

Նախանուագ, երգեհոն Գէորգ Մ. Թովմասեան  
Երգ 5 ԺՈՂՈՎՈՒՐԴ

Երկրպագութեան Պաշտամունք  
վեր ԱՐՍԷՆ Ա. ԿԵՕՐԿԻԶԵԱՆ

Խմբերգ, երգեցիկ Խումբ

“Seek ye the Lord” — J. U. Roberts

Բարի գալուստի ուղերձ

Եկեղեցւոյ Խովիւր՝ վեր. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բարի գալուստի ուղերձ Rev. Myron W. Fowell

Pastor Park Congregational church and  
Executive Secretary Worcester City  
Missionary Society.

Խմբերգ, «Ու երկինքէն Ձայն մը Լսեցի»

ԵՐԳԵՅԻԿ ԽՈՒՄԲ

Ուղերձ ի յիշատակ վեր. Կոստան Մուսեանի

վեր. Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆ

Երգ 373

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Առաքելական օրհնութիւն

վեր. Յ. Մ. ՏԵՓՈՅԵԱՆ

ՆԻՍՏ Բ.

Յունիս 16, Ուրբաթ Առաւօտ

9:00 Աղօթքի Պաշտամունք վեր. Յ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

9:25 Գործի ժողով

Անուանակոչութիւն

Ընթերցում Նախորդ Նիստի Արձանագրութեան

ԲԱՐՏՈՒՂԱՐ

ԽՆԴԻՐՆԵՐ

ա. Բարեփոխեալ Սահմանադրութիւն

Յանձնախումբի Տեղեկագիրը

— 23 —

- բ. Միջմիութեանական Մարմին մը Ստեղծելու Գաղափարը — Յանձնախումբի Տեղեկագիրը
- գ. Հարիւրամեակը Աւետարանական Շարժման ի Հայս և Ուրսուն-Երեքամեակը Հայաստանեայց Աւետարանական Անդրանիկ Եկեղեցւոյ Կազմութեան
- դ. Միութեան Պաշտօնաբերքը Եւ Նոր Աւետաբերը
- ե. Մնայուն Նամակագրութի մը Ընտրութիւնը
- զ. Միութեան Վարչութեան Կազմը — Երիտասարդաց Եւ Կանանց Անդամակցութիւնը Միութեան Վարչական Կազմին
- է. Զնայատեսուած Խնդիրներ:

12:12-10 Երգ Եւ Աղօթք վեր. Ե. Գ. ձԸՐՆԱԶԵԱՆ  
 12:30 ձԱՇ

**ՆԻՍՏ Գ.**

Յունիս 16, Ուրբաք Կէսօրէ Ետք

- 2:00 Աղօթքի Պաշտամունք վեր. Ն. Գ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ
- 2:20 Ուղերձներ  
 Մեր Կիրակնօրեայ Գայրոցներ Եւ զանոնք գօրացնելու միջոցները
- 2:20-2:30 1. վեր. Ե. ձԸՐՆԱԶԵԱՆ
- 2:30-2:40 2. վեր. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
- 2:40-2:50 3. վեր. Ա. Ա. ԿԷՕՐԿԻԶԵԱՆ
- 2:50-3:20 4. Ինչէ՞ն կը ծագի Եկեղեցիներու Բարեկարգութեան Պէտքը վեր. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

**ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ  
 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

Ուրբաք Կէսօրէ Վերջ

- 3:20 Բացում Նախագահ՝ ՏԻԱՐ Կ. Թ. ՓՈՒՇՄԱՆ
- 3:35 Գործի Ժողով
  - 1. Ընթերցում նախորդ տարեժողովի արձանագրութեան — Քարտուղար ՏՕԳԹ. Ե. ՀԱՏԻՏԵԱՆ
  - 2. Տեղեկագիրներ
    - ա. Գանձուն — Գանձապետը
    - բ. Խնամակալութեան Եւ Վարչութեան — Քարտուղարը
    - գ. Կեդրոնական Գործադիր Խորհուրդի
    - դ. Յանձնախումբերու  
 վեր. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ
  - ե. Նոր խնդիրներ
- 5:30 Երգ Եւ Աղօթք վեր. Հ. ԱՇՃԵԱՆ
- 6:00 ձԱՇ

**ԱԻԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ  
 ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ**

- 8:00 Պաշտամունք վեր. Ս. Հ. ՀԱԼԱՃԵԱՆ  
 Խմբերգ, Երգեցիկ Խումբ «Եկեղեցին Հիմնեալ է» —  
 G. F. Le Jeune
- Ատենախօսութիւն ՏԻԱՐ Կ. Թ. ՓՈՒՇՄԱՆ  
 Խմբերգ, Երգեցիկ Խումբ.—
- “Jehova’s Praises Prolong”—Alfred Wooler
- Ատենախօսութիւն ՏԻԿԻՆ Յ. ԿԷՐԹՄԷՆԵԱՆ  
 Ատենապետուհի Գալիֆորնիոյ Աւետարանչական  
 Յանձնախումբին
- Ատենախօսութիւն ՏՕԳԹ. Ե. Յ. ՀԱՏԻՏԵԱՆ  
 Երգ, «Եկեղեցիդ Ընդհանրական»

ՆԻՍ Գ.

Յունիս 17, Շաբաթ Առաւօտ

9:00 Աղօթքի Պաշտամունք ՊԱՏ. Ա. Խ. ԵՐԱՄԵԱՆ

9:20 Գործի Ժողով

ա. Անուանակոչութիւն

բ. Ընթերցում նախորդ ժողովի Ատենագրութեան —  
Քարտուղարը

գ. Ընտրութիւն Նոր վարչութեան

դ. Տեղեկագիր Որոշմնագրերու Յանձնախումբին

ե. Առկախ Խնդիրներ

զ. Նոր Խնդիրներ:

11:00 Ուղերձ — Տպաւորութիւններ Միութեան վարչու-  
թեան Էկեղեցիներուն տուած այցելութեանց

ՎԵՐ. Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆ

ՎԵՐ. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

11:30 Յորդար

ՎԵՐ. Խ. Կ. ՊԷՆՆԷՆԱՆ

12:00 Փակման Պաշտամունք ՎԵՐ. Յ. Մ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ  
ԲԱՅՕԹԵԱՅ ՃԱՇ 1-ԻՆ

Green Hill Park Chestnut Grove

6:30

ՊԷՆՔՈՒԷԹ

Շաբաթ Երեկոյ

Կարն Ուղերձներ — Ներկայ եղող պաշտօնեաներու եւ  
Նուիրակներէն ումանց կողմէ

Երգ 238 «Եղբայր եմք մեմք»

Առաջելական Օրհնութիւն

ՎԵՐ. Հ. Յ. ԱՇՃԵԱՆ

# ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԻՍԱԽՈՐ ՊԱՂՏԱՄՈՒՆԻՔ

Կիրակի Առաւօտ, Յունիս 18, Ժամը 10:45

Նախանուագ ԵՐԳԷՏՈՆ — ՊՐ. Գ. Մ. ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ

Թափօր, Երգչախումբեր, Երգ 12:

Չորրորդ համարը ժողովուրդին մասնակցութեամբ

Մաղբանք եւ Տէրունական Աղօթք

Առաջնորդութեամբ ՎԵՐ. Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆԻ

Սաղմոսի փոխասացութիւն

Առաջնորդութեամբ ՎԵՐ. Ե. ՃՐՆԱԶԵԱՆԻ

Երգ

Առաւօտ լուսոյ,

Արեգակն արդար,

Առ իս լոյս ծագեայ:

Բոլխումն ի Հօրէ,

Բոլխեա ի հոգւոյս,

Բան քեզ ի համոյս:

Գանձող ողորմութեան,

Գանձիդ ծածկելոյ,

Գտող զիս արա:

Թագաւոր փառաց,

Թողութեանց տըւող,

Թող ինձ գյանցանս:

Ժողովող բարեաց,

Ժողովեայ եւ զիս

Ժողովս անդրանկաց:

Սէր անուն Յիսուս,

Սիրով քով նմեայ,

Սիրտ իմ քարեղէն:

Վասն գրութեան,

Վասն ողորմութեան,

Վերստին կեցոյ:

Փրկիչ բոլորից,

Փութա զիս փրկել

Փորձութեանց մեղաց:

Քաւիչ յանցանաց,

Քաւեայ զօրհնաբանս

Քեզ երգել զփառս:

Ս. Գրոց ընթերցում վեր. Յ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ  
 Մեներգ «Հայր Մեր» — Ս. Էօմիլիան  
 ՏԻԿ. Հ. ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ  
 «Գոհացե՛ք Տէրոջմէն ինչու որ բարի է, ինչու որ  
 Անոր ողորմութիւնը յախտեան է»  
 Արձագանգ ԵՐԳԵՅԻԿ ԽՈՒՄԲ  
 Հովուական Աղօթք վեր. Յ. Մ. ՏԵՓՈՅԵԱՆ  
 Խմբերգ ՓՈՒՐԵՐՈՒ ԵՐԳԵՅԻԿ ԽՈՒՄԲ  
 Ծանուցումներ եւ նուիրատուութիւններ  
 Նուագ ջութակի վրայ ՄԵՍՐՈՎԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ  
 Խմբերգ, “They that Trust in the Lord”—Adolf Frey  
 ԵՐԳԵՅԻԿ ԽՈՒՄԲ  
 Բարոց վեր. Յ. ԳԱՌԹՕԶԵԱՆ  
 Նորընտիր հովիւ ՏԻՔՐՕՅԻ Հայ  
 Աւետարանական Եկեղեցիին  
 Խմբերգ, “Sing Alleluia Forth”—Dudley Buck  
 ԵՐԳԵՅԻԿ ԽՈՒՄԲ  
 Աղօթք եւ Առաք. օրհնութիւն վեր. Ա. Ա. ԿԵՕՐԿԻԶԵԱՆ

## ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈՅ

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ  
 ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ժամը 6:30

Նախանուագ ԵՐԳԼՀՆԻ  
 Մաղթանք եւ Տէրունական Աղօթք վեր. Ն. Գ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ  
 Երգ 9, «Պաշտեցե՛ք զՏէր» ԺՈՂՈՎՈՒՐԴ  
 Ս. Գրոց ընթերցում վեր. Ս. Մ. ՄԽԻԹԱՐԵԱՆ  
 Աղօթք վեր. Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
 Խմբերգ, “O Lord, how Manifold are Thy Works—  
 Shackley ԵՐԳԵՅԻԿ ԽՈՒՄԲ

Ծանուցումներ եւ նուիրատուութիւն  
**Tenor Solo** ԳԱՐԵԳԻՆ ՕՂԱՍԱՓԵԱՆ  
 Բարոց վեր. ԱՐԱՄ Թ. ՊԱՂՏԻԿԵԱՆ  
 Մեներգ, «Օրհնեալ է Աստուած»  
 ՏԻԿ. Հ. ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ  
 Ս. Պատարագէն Կտորներ  
 Սեղանին պիտի սպասարկեն  
 վեր. Բ. Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆ  
 Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Երգ

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ով կենդանի հաւատք մեր հարց,  
 Զոր չընկնեցին հուր, սուր ու բանա  
 Ո՛հ, մեր սրտերն ի՛նչպէս երեւին,  
 Պահելով միշտ այդ սուրբ աւանդ:  
 Մեր հարց հաւատք մաքուր, վստահ,  
 Պիտի կառչինք ինչ մի մահ:

Հաւատք մեր հարց, պիտի ջանանք  
 Բեզի բերել ազգեր համայն,  
 Որ երկնային նշմարտութեամբ  
 Մեղքէն փրկուին, ազատ ըլլան:  
 Մեր հարց հաւատք, եւայլն...

Հաւատք մեր հարց, պիտի սիրենք  
 Ամէն մարդիկ, բարի թէ չար,  
 Որ մեր սիրոյ խօսքէն, գործէն  
 Գրդուին ըլլան ինչպէս տանար:  
 Մեր հարց հաւատք, եւայլն...

Առաքելական Օրհնութիւն վեր. Ա. Պ. ՀԻՒՍԵԱՆ





**ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ**

**ԳՈՂԳՈԹԱ ԵԿԵՂԵՑԻ**

138 Tenth St., Troy, N. Y.

Հովիւ Վեր. Եփրեմ Գ. ձըրնագեան  
2 Tenth Street

**ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ**

Իրրեւ եկեղեցի կազմակերպուած է 1920-ին: Շէնքը կառուցուած է 1916-ին, Վեր. Մ. Թ. Գալալճեանի պաշտօնավարութեան շրջանին եւ անոր ջանքերովը: Արժէքն է 25,000 տոլար:

Ունի երիցատուն մը, որ շինուած է 1926-ին, Վեր. Ս. Բէճէպեանի պաշտօնավարութեան շրջանին: Արժէքն է 8000 տոլար:

Հաղորդական անդամներու թիւն է 101, որմէ 39-ը արական եւ 62ը՝ իգական են: Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 235:

Կիրակնօրեայ պաշտամանց ներկաներու միջին թիւը եղած է 110, իսկ աղօթատոմարներունը՝ 11:

Մատակարարուած է 3 անգամ Հաղորդութեան Ս. Խորհուրդ, եւ կատարուած է 3 մկրտութիւն, 3 յուշարկաւորութիւն, 1 սրահադրութիւն:

Տարեկան պիւտճէն է 2940 տոլար, որուն 300-ը արտաքին ազրիւրէ ստացուած է, իսկ մնացեալը գոյացած է ժողովուրդի կամաւոր նուէրներովը: Աւետարանական Միութեան տրուած է \$25.00 եւ Աւետարանչականին՝ \$100.00:

Ներկայ Հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի Յունուար, 1927-ին:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ**

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն.— Կազմուած է 1916-ին: Անդամուհիներու թիւն է 67:

Ունեցած է հոգեւոր, ընկերային, դասախօսական եւ վիճարանական ժողովներ՝ խնամեալ յայտադրով, մէկ պազար եւ ուրիշ ձեռնարկներ:

Անդամական ժողովներ տեղի ունեցած են ամիսը մէկ անգամ: Ներկաներու միջին թիւը եղած է 45: Աղօթատոմարներ՝ ամիսը երկու անգամ — մին թրօյ, միւսը Աւրընի: Ներկաներու թիւը միջին հաշուով եղած է 16:

Օգնած է եկեղեցիէն ի զատ նաեւ բարեգործական նպատակներու:

Տարեկան մուտքը եղած է \$400.00:

Երիտ. Բրիտ. Ընկերակցութիւն.— Տեղական պայմաններու բերմամբ Երիտ. Բրիտ. Ընկ.—ը կրցած չէ իր գոյութիւնը շարունակել: Անոր տեղ մէկ տարի առաջ կազմուած է Կրտսերաց Բրիտ. Ընկ. (Junior): Անդամներու թիւն է 30:

Ամէն Կիրակի կանոնաւորապէս տեղի կ'ունենան ժողովներ, որ կը բաղկանան Ս. Գրոց դասերէ, աղօթքներէ, կրօնական դասախօսութիւններէ եւ երգեցողութենէ:

Տարեկան մուտքէն \$5.00 նուիրած է Աւետարանչա-  
կանին :

Կիրակօթեայ Դպրոց.— Աշակերտաց թիւն է 70,  
որոնք բաժնուած են 6 կարգերու, մէկը չափահասներու,  
իսկ 5-ը՝ փոքրերու համար: Դասախօսութեանց լեզուն  
ընդհանրապէս Անգլիերէն եղած է: Ուսուցիչներէն 4-ը,  
քաջալերական է ըսել, Կիրակօթեայ զպրօցի նախկին  
աշակերտներէն են: Տարեկան մուտք եղած է 65 տուար:

Երգիչ Խումբ.— Բնի միայն կրտսերաց երգչա-  
խումբ — Junior Choir: Անդամներու թիւն է 18:


### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Եկեղեցին արդիւնաւորապէս իր գործունէութիւնը  
յառաջ տարած է խաղաղութեամբ եւ համերաշխու-  
թեամբ, որուն բարերար ազդեցութիւնը զգալի եղած է  
ամբողջ գաղութին մէջ:

Հանդիսաւորապէս կատարուած է Վարդանանց եւ  
Հայ Նահատակաց Յիշատակութեան տօները:

Բեմական ծառայութեան մասնակցած են Վերպը.  
Մ. Թ. Գալայճեան եւ Պատ. Կ. Նօթուտեան: Վեր. Կ.  
Ատանալեան եկեղեցւոյ հովիւի եւ հոգաբարձութեան հը-  
րաւէրովը ունեցած է քանի մը արդիւնաւոր արթնութեան  
ժողովներ:

Եկեղեցին նաեւ վայելած է այցելութիւնը Աւետ.  
Միութեան Վարչութեան նախագահին եւ փոխ-նախա-  
գահին:



### ԼՈՐԷՆՍԻ ԲԷԹԷԼ շԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

8 Lowell St., Lawrence, Mass.

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ԱՐՇԱԿ Պ. ՀԻԻՍԵԱՆ  
35 Basswood Street

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եկեղեցին կազմուած է 40 տարիներէ ի վեր, իսկ  
իրը կրօնական օրինական հաստատութիւն կազմակերպ-  
ուած է 1920, Յունուար 29-ին:

Նոր շէնքին կառուցման ձեռնարկուած է 1921, Մարտ  
ամսոյն, ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանին

եւ անոր ջանքերով : Տնտեսական ձախորդ պայմանները , սակայն , ցարդ արգելք եղան անոր ամբողջական եւ շուտափոյթ լրացումին :

Երբ լրանայ , պիտի արժէ 25,000 տոլար :

Հաղորդական անդամներու թիւն է 38 . 20-ը այր , իսկ 18-ը կին : Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 350 :

Կիրակնօրեայ պաշտամանց ունկնդիրներու միջին թիւը եղած է 60-85 , երբեմն հարիւրէ աւելի , իսկ աղօթաժողովներունը՝ 10 :

Մատակարարուած է Հաղորդութեան Ս . Պորհուրդը 4 անգամ եւ վատարուած է մէկ մկրտութիւն եւ մէկ թաղում :

Հանդիսաւորապէս տօնուած է Ազգային տօներէն Վարդանանցը , եւ Պրիմեան Հայրիկի մահուան Քսանեւ-հինգամեակի յիշատակութիւնը :

Ընթացիկ տարուան մէջ ելեւմտից հաշիւը եղած է 2600 տոլար , որուն 700-ը ժողովուրդը վճարած է , իսկ մնացեալը՝ Mass. Home Missionary Society-ն : Այս գումարէն 550 տոլար կը վճարուի ի հաշիւ Հէյվըրհիլի եւ Լօվէլլի գործին :

Աւետարանական Միութեան տուած է 10 տոլար , իսկ Աւետարանչական Ընկերակցութեան՝ 16 տոլար :

#### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկնանց Օթանդակ Ընկերակցութիւն .— Վերակազմուած է 1928-ին : Անդամներու ներկայ թիւն է 18 : Երկու շարքին անգամ մը ունեցած է կանոնաւոր աղօթքի եւ գործի ժողովներ , որոնց ներկայ գտնուողներու միջին թիւը եղած է 10-15 :

Չեռնարկները եղած են ներկայացում , հացկերոյթներ եւ ընկերական հաւաքոյթներ :

Տարեկան մուտքը եղած է 250 տոլար : Նուիրած է նորակառոյց եկեղեցիի բեմի ետեւի մեծաղիւր ու գեղա-

կերտ պատուհանը , որ կը ներկայացնէ « Յիսուս Բարի Հովիւր » :

Երիտասարդաց Քրիստոնէաչան Ընկերակցութիւն .— Կազմուած է 1926-ին : Անդամներու ներկայ թիւն է 25 , որ եկեղեցւոյ պատմութեանը մէջ մեծազոյն թիւը կը ներկայացնէ :

Ամէն Կիրակի երեկոյ կանոնաւոր ժողովներ տեղի ունեցած են զուտ կրօնական հանգամանքով : Ժողովներու սկզբնաւորութեան մի քանի ըուպէները յատկացուած են երգի եւ աղօթքի :

Չեռնարկներ եղած են « Բէննի Սօչըր » , « Պին Սըլբըր » , ներկայացում եւ ընկերական հաւաքոյթներ :

Նորակառոյց եկեղեցիին նուիրած է խոշոր ջահ մը :

Իբրեւ աննախընթաց եւ օրհնաբեր նորութիւն Կիրակնօրեայ պաշտամունքներէն միոյն առաջնորդութիւնը վարած է գնահատելի յաջողութեամբ :

Կիրակնօրեայ Դպրոց .— Աշակերտաց թիւն է 36 , որ բաժնուած է երեք կարգերու : Ասկէ զատ վայ նաեւ երկտասարդաց կարգ մը 12 անդամներով :

Դասախօսութեանց լեզուն՝ երկու կարգերուն հայերէն իսկ երկուքին մեծ չափով անգլիերէն եղած է :

Նորակառոյց եկեղեցիին նուիրած է Մկրտութեան աւազան մը :

Երգիչ Խումբ .— Անդամներու թիւն է 15 : Երկար տարիներէ յետէ յաջողութեամբ խումբին առաջնորդած է Պրն . Վահան Կիւլեան :

Պումբը ամէն Կիրակի կանոնաւորապէս ներկայ գըտնուած եւ երգած է պաշտամանց ընթացքին :

#### ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Շինութեան ձեռնարկուած է Մարտ , 1931-ին : Անկիւնաքարի զետեղումը տեղի ունեցած է նոյն տարւոյ Յուլիս 20-ին մեծ հանդիսաւորութեամբ եւ ի ներկայու-

թեան ու մասնակցութեամբ 6 Հայ եւ 7 Ամերիկացի հովիւներու :

Արտաքին մասը ամբողջապէս լրացած է, իսկ ներքին մասի շինութիւնը ներկայիս յառաջ կը տարուի : Տնտեսական տաղնապար մեծապէս ազդած է անոր փութով լրացումին :

Նորակառուցց եկեղեցին կը կանգնի քաղաքի կեդրոնական մասին մէջ հասարակաց պարտէզին տօրնթեր եւ ի շարս Ամերիկեան եկեղեցիներու :

Ունի ընդարձակ ներքնասրահ, խոհանոց եւ երեք առանձին սենեակներ : Գոթածեւ պատուհանները զարդարուած են արուեստի նրբութեամբ եւ զեղեցիկ համազարուութեամբ շինուած stained glass-ով :

Եկեղեցին կրնայ պարունակել 300 անձ :

Շինութեան ձեռնարկը իր սկզբնաւորութեան մէջ քաջալերուեցաւ 1000 տոլարի նուիրատուութեամբ մը Կարմրի Գիւղի Ուսումնասիրացի կողմէն :

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք նաեւ բոլոր այն աջակցութիւնները որ ընձեռուած են մեզի մեր քոյր եկեղեցիներու եւ ընդհանրապէս հայ հասարակութեան կողմէ :

## ՀԷՅՎԸՐԶԻԼԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՇՆ

Haverhill, Mass.

ՀՈՎԻԻ ՎԵՐ . Ա . Պ . ՀԻԻՍԵԱՆ

35 Basswood St., Lawrence, Mass.

Հազարդական անդամներու թիւն է 11 : Աւետարանական համայնքին միջին թիւը կը հասնի 93-ի :

Կիրակնօրեայ պաշտամունքները ամէն Կիրակի կանոնադրար տեղի կ'ունենան Old South Church-ին մէջ : Ունկնդիրներու միջին թիւը եղած է 35 : Երբեմն մինչեւ 70-100 :

Կիներու համար շարաթամիջի կանոնաւոր աղօթքի ժողովներ տեղի կ'ունենան եկեղեցիին մէջ : Ներկաներու թիւը եղած է 8-12 :

Մտտակարարուած է 2 անգամ Հազարուութեան Ս . Խորհուրդ, եւ կառարուած է մէկ մկրտութիւն եւ երկու թագում :

Տարեկան պիւտճէն է 400 տոլար, որոյ 150-ը ժողովուրդէն՝ իսկ 250-ը Mass. Home Missionary Society-էն կը հոգացուի :

Աւետարանական Ընկերակցութեան վճարած է \$5.67 :

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի 1930-էն, որմէ առաջ 15 տարիներ անընդհատ պաշտօնավարած էր հանդուցեալ Վեր . Կ . Մումճեան :

Հանդիսաւորապէս կատարուած է Վարդանանց Տօնը եւ Խրիմեան Հայրիկի մահուան 25-ամեակի յիշատակութիւնը :

Լորէնսի Բէթէլ Եկեղեցւոյ երգիչ խումբը իր ամբողջ անդամներով մասնակցած է այս պաշտամունքներէն ու մանց :

Ունեցած է երկու ընկերական հաւաքոյթներ :

## ԶԼՍԻԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՇՆԸ

Chelsea, Mass.

ՀՈՎԻԻ ՊԱՏ. ԱՐՇԱՄ ԵՐԱՄԵԱՆ

69 Marlborough Street

Այս միջոցը կազմակերպուած է 1913-ին: Հաղորդական անդամներու թիւն է 29, 6 այր եւ 23 կին: Ներկայ տարեշրջանին աւելցած են 4 նոր անդամներ:

Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 54:

Կիրակնօրեայ պաշտամունքներ ամէն Կիրակի տեղի ունեցած են Ամերիկեան եկեղեցիի մէջ: Ներկաներու միջին թիւը եղած է իւրաքանչիւր Կիրակի, 34, իսկ ազօթաժողովներունը՝ 15:

Հաղորդութեան Խորհուրդը մատակարարուած է միայն մէկ անգամ Ամերիկեան եկեղեցիի հետ միասնաբար: Կատարուած է մէկ սրահաղորդութիւն:

Տարեկան պիւտձէն է 1150 տոլար, որուն 725-ը արտաքին աղբիւրէ կը հոգացուի:

Աւետարանչական Ընկերակցութեան տրուած է 32 տոլար:

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի Մարտ, 1931-էն:

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն. — Կազմակերպուած է Մայիս, 1929-ին: Անդամներու թիւն է 22: Նախորդ տարւոյ վրայ 4 անգամի յաւելում տեղի ունեցած է: Իր ձեռնարկները եղած են ճաշկերոյթ, թէյ յասեղան եւ Ծաղկի Օր:

Կանանց ժողովները տեղի ունեցած են ամիսը անգամ մը, որոնց ներկայ եղողներու միջին թիւն եղած է 15:

Հայերէնի Դպրոց. — Ազգայնոց հետ գործակցաբար կը պահուի դպրոց մը 58 աշակերտներով:

Եկեղեցին մեծ դեր կատարած է գործակցելով Ամերիկեան Կարմիր Իյաչի, կառավարութեան, Հայ Նպաստամատոյց Մարմնոյ հետ սպասուկելով նպաստ չատ մը հայ աղքատ ընտանիքներու համար:

Եկեղեցին վայելած է նաեւ այցելութիւնը Աւետ. Միութեան Վարչութեան յանձինս Վեր. Սոկրատ Մ. Մխիթարեանի եւ Գ. Պետրոսեանի:

## ԼԻՆԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Lynn, Mass.

ՀՈՎԻԻ ՊԱՏ. ԱՐՇԱՄ ԵՐԱՄԵԱՆ

69 Marlborough St., Chelsea, Mass.

Այս առաքելութիւնը ներկայ ձեւին մէջ կազմակերպուած է 1913-ին: Անդամներու թիւն է 19, 8-ը այր եւ 11-ը կին: Աւետարանական համայնքի մօտաւոր թիւը կը հասնի 40-ի:

Կիրակնօրեայ պաշտամունքներ կանոնաւորապէս շարունակուած են ամէն Կիրակի Ամերիկեան եկեղեցիի մը մէջ: Ներկաներու միջին թիւը եղած է 24:

Այս տարեշրջանին երկու մահեր տեղի ունեցած են:

Տարեկան ձեւումուքը կը ներկայացնէ 360 տոլարի գումար մը, որոյ 120-ը՝ ժողովուրդը, իսկ մնացեալը վճարած է Mass. Home Missionary Society-ն:

Աւետարանչական Ընկերակցութեան համար տուած է 8 տոլար:

Ներկայ հովիւը իր պաշտօնին ձեռնարկած է 1931, Հոկտեմբեր ամսոյն:

Կանանց Օժանդակ Միութիւն. — Միութիւնը կազմուած է 1932, Մարտին: Անդամուհիներու ներկայ թիւն է 16: Ժողովներ տեղի ունեցած են ամիսն անգամ մը տուներու մէջ: Ներկաներու միջին թիւը եղած է 10:

Կազմակերպած է գեղարուեստական հանդէս մը եւ թէյ յասեղան մը:



## ՆԻԻ ԵՈՐՔԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

152 East 34th Street

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ԱՆԴՐԱՆԻԿ Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Արտաքին

Նախընթաց շատ մը տարիներէ հետէ Նիւ Եորքի մէջ յառաջ տարուած աւետարանական գործը հովիւով մը եւ չորս հիմնադիր անդամներով իրրեւ եկեղեցի կազմակերպուեցաւ Նոյեմբեր 14, 1896-ին: 1901, Ապրիլ 8-ին նահանգային վառավարութեան կողմէ վաւերացուեցաւ (incorporated) իրրեւ օրինաւոր կրօնական հաստատութիւն մը:

Իր սեփական շէնքին տիրացաւ քաղաքին ամէնէն արժէքաւոր փողոցներէն մէկուն վրայ 1921-ի վերջը: Առաջին անգամ գործածութեան զրուեցաւ 1923, Յունիս 10-ին: Արժած է (կահ-կարասիքովը, ինչպէս նաեւ փողաւոր նոր երգեհոնով մը (10,000 տոլար) — 145,000 տոլարի չափ: Միակ պարտքը որ կը մնայ շէնքին վրայ 17,500 տոլարի զուժար մըն է:

1932 տոմարական տարուան գանձապետի ընդհանուր հաշուեկշիւը ցոյց կուտայ 21,191.39 տոլարի ելեւմուտք մը, որուն \$2,269.43-ը՝ Հայ Աւետարանչականի տրուած է, 4172.67-ը ազքատաց պնակի հասոյթն է, իսկ մնացեալը՝ երեք ոժանդակ կազմակերպութեանց ելեւմուտքերը: Եկեղեցին բոլորովին ինքնապահ է:

Քաղաքիս Աւետարանական համայնքին թիւը անորոշ է: Եկեղեցիին «ծուխը» կամ ժողովուրդը 300 ընտանիք վը հաշուուի:

Հաղորդական անդամներու թիւն է 414 (որոնց 34-ը հեռաբնակ) . արք՝ 154, կանայք՝ 238: Ներքին

Հովիւն է Վեր. Ա. Ա. Պետիկեան որ կը պաշտօնավարէ 1915, Ապրիլ 1-էն սկսեալ:

Եկեղեցին կը կառավարուի կրկնակ մարմիններով — Հոգաբարձութիւնով մը որ կը բաղկանայ 14 հոգիներէ եւ Սնամակալութիւնով մը՝ 9 հոգիէ, — որ արտաքին կամ նիւթական գործին պատասխանատուութիւնը կը կրեն:

1932-ի ընթացքին Հաղորդութեան Սորհուրդը մատակարարուած է հինգ անգամ եւ 44 անձինք, մեծ մասամբ երիտասարդներ, եկեղեցւոյ անդամակցութեան մէջ ընդունուած են (զաւանանքով 18, նամակով 26): Մկրտուած են 16 մանուկներ: Մահերու թիւը եղած է 10, որոնց 5-ը եկեղեցւոյ անդամ էին. ամուսնութիւնք՝ 9:

Ամէն մէկ ամսոյ վերջին Կիրակին պաշտամունքը եւ քարոզութիւնը անդլիերէն լեզուով կ'ըլլայ:

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն. — Կազմակերպուած 1898, Սեպտեմբերին: Անդամակցութեան թիւ 65: Տարեկան մուտք \$655.58: Ամսական հաւաքոյթներու յայտագիր — ճաշ, ներշնչման պահ, դասախօսութիւն մը, երաժշտական մաս, գործի ժողով: Ներկայից թիւը 60 (տուակաւորոյնը 110): Զեռնարկներ. — Տարեկան պահար մը, ներկայացումներ, ընդհանուր ճաշեր, որբախընամ գործ, Աւետարանչականի համար որոշ յանձնառութիւն:

Քրիստոնէական Զանից Ընկերակցութիւն. — Նախընթացը կազմակերպուած պատմականօրէն 1892-ին (նախքան զկազմակերպութիւն եկեղեցւոյ): Սա կազմուածուելով վերակազմուած է եկեղեցիին հովանիին տակ: Իր ներկայ ձեւին մէջ դրուած է երկու տարի առաջ՝ շեշտելու համար հոգեւոր կեանքը եւ գործունէութիւնը գեոսահաս երիտասարդութեան մէջ:

Ժողովներ տեղի կ'ունենան ամէն Կիրակի իրիկուն, իսկ ամբան երեք ամիսները՝ Չորեքշաբթի իրիկուններ:

Այրերու Եղբայրակցութիւն. — Կազմակերպուած 1929, Հոկտեմբերի մէջ: Կը գումարուին ամիսը մէկ անդամ, տարին Եօթը ամիս միայն եւ իւրաքանչիւր անգամ նախ ճաշ մը կ'ունենան մէկտեղ եւ սպա հմտալից դասախօսութեան մը ունկնդիր կ'ըլլան հիւրէ մը: Մուտքը եղած է 128.57 տոյար: Ներկայից միջինը 27:

Երգիչ Խումբը. — Սովորական առիթներով կը բաղկանայ 14 հոգիէ, բայց մասնաւոր առիթներով օժանդակ ուժեր թիւը կը բարձրացնեն մինչեւ 30 կամ աւելի:

### Տարածական Գործունէութիւն (Extension)

Ամիսը երկու անգամ քաղաքիս այն մէկ թաղին մէջ ուր առակաւորոյն թուով կ'ապրին մեր ժողովուրդէն ան-

դամներ (Washington Heights), Կիրակի կէսօրէ ետք պաշտամունք կը կատարուի:

Ամիսը մէկ անգամ Նիւարք, Ն. Ճ. ի մէջ Կիրակի կէսօրէ վերջ պաշտամունք կը կատարուի նոյն քաղաքին Աւետարանական Հայերուն համար որոնց մեծամասնութիւնը մեր անդամներն են արդէն:

Թաղային աղօթաժողովներ կ'ունենանք Յունուարէն մինչեւ Զատիկ քաղաքիս զանազան կեդրոններուն մէջ: Ամէն Չորեքշաբթի իրիկուն եկեղեցւոյ մէջ կ'ըլլայ աղօթքի ժողովը: Ներկայից ընդհանուր միջինը ամէն տեղ 12: Հրատարակութիւններ

«Շարաթական Թերթիկը» կը հրատարակուի ամէն շաբթու անբացառ տարուան տասը ամիսները: Այս թերթիկին հրատարակութեան 21-րդ տարին պիտի փակուի Յունիսի վերջը:

«Ճրագ» անուն պարբերաթերթիկ մը եւս կը հրատարակենք 1929 Յունուարէն սկսեալ որ կը բաղկանայ 8 էջերէ: 1500 օրինակ կը սպազրուի եւ արտասահմանի մեր քոյր եկեղեցիներուն իրրեւ նուէր կը զրկուի ձրիաբար ժողովուրդին բաշխուելու համար: Երկու հրատարակութիւններուն ալ խմբագիրն է հովիւը:

### Ս. Գրոց Դաս

Կիրակնօրեայ Դպրոց շունինք տեղական արգելքներու պատճառաւ: Հովիւը մասնաւոր դասընթացք մը կուտայ ամիսն անգամ մը խումբ մը երիտասարդներու:

### Վիճակացոյց Գործունէութեանց

1932 տարուան ընթացքին ունեցած ենք պաշտամունք եւ քարոզութիւն 80, աղօթաժողովներ 56, Ք. Զ. Ը. ի աղօթաժողովներ 49, դասախօսութիւններ 12, նուագահանդէս 1, ներկայացումներ 3, տօնաւաճառ 1, ծառահանդէս 3: Ծաշեր մասնաւոր կազմակերպութիւններու համար, կամ ընդհանրական, միջին հաշուով հատ մը ամէն երկու շաբաթը կամ տասն օրը:

## ՆԻԻՊՐԻՓՈՐԹԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՇԸՆ

Newburyport, Mass.

Այս առաքելութիւնը կազմակերպուած է Աւետարանի քարոզութիւնը յառաջ տարուած է 1892-էն ի վեր զանազան հովիւներու կողմէ :

Վերջին 16 տարիները հաւատարմարար հովուական պաշտօնը կը վարէր Վեր. Կոստան Մուսճեան, որ իր յաւիտենական հանգիստը մտաւ Սպրիլ 8, 1933-ին :

Հաղորդութեան անդամներու թիւն է 10 : Աւետարանական համայնքը կը բաղկանայ 35 հոգիներէ : Ամբողջ հայ զաղութի թիւը կը հասնի մօտաւորապէս 250-ի :

Պաշտամունքները վերջին տարիներու մէջ տեղի ունեցած են ամէն Կիրակի Ամերիկեան Central Congregational Church-ին մէջ : Ներկայ եղողներուն միջին թիւը եղած է 20-25 :

Տարեկան պիւտճէն վերջին տարին եղած է 350 տուար, որուն 100-ը ժողովուրդը, իսկ 250-ը Mass. Home Missionary Society-ն վճարած է :

Տիկնանց ազօթաժողովները շարաթր անդամ մը կանոնաւորապէս տեղի ունեցած են տուններու մէջ : Ներկաներու միջին թիւը եղած է 15 :

Վեր. Մուսճեանի մահուամբ թափուր մնացած բեմը ըստ վերջին կարգադրութեան յանձնուեցաւ Վեր. Ա. Պ. Հիւսեանի :

## ՇԻՔԱԿՕԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ Հ. ԱՇՃԵԱՆ

3135 Herndon Ave., Chicago, Ill.

Սեփական շէնք չունի : Պաշտամունքները կը կատարուին Հայ Կրթական Հիմնարկութեան սրահին մէջ, 125 W. Chestnut street.

Հաղորդական անդամներու ներկայ թիւն է 38, արք' 13, կանայք» 22 : Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 150, որոյ մէկ մասը կապուած է Ամերիկեան եկեղեցիներու եւ սակայն Վ'օժանդակէ եկեղեցիի ընթացիկ ծախուց :

Կիրակնօրեայ պաշտամանց ունկնդիրներու միջին թիւը եղած է 40 : Ամիսը անդամ մը պաշտամունքները կատարուած են թուրքերէն լեզուով թրքախօս ազգայիներու համար : Այս պաշտամանց ներկաներու միջին թիւը եղած է 50-70 :

Ազօթաժողովներ տեղի ունեցած են Մեծ Պահոց առթիւ : Ընթացիկ տարուան մէջ մատակարարուած է Հաղորդութեան Ս. Խորհուրդը եւ կատարուած է 7 մկրտութիւն եւ 3 պսակադրութիւն :

Տարեկան ելեւմուտքը կը ներկայացնէ 1900 տուարի հաշիւ մը, որոյ 1600-ը գոյացած է ժողովուրդէն, իսկ մնացեալը վճարուած է Հօմ Միշընէրի Սոսաիթիէն :

Աւետարանչական Ընկերակցութեան տուած է 200 տուար :

Բեմին իրենց օժանդակութիւնը բերած են Rev. C. S. Laidman, Տեարք Կ. Թ. Փուլմըն եւ Մ. Օտեան :

Եկեղեցիին վայելած է նաեւ այցելութիւնը Միւթեան նախագահ Վեր. Ա. Պ. Հիւսեանի :

Հանգիստուր կերպով կատարուած է վարդանանց յիշատակութիւնը :



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկ.— Անդամներու թիւն է 32: Ունեցած է եռանդուն դործունէութիւն: Երկու շաբաթ անդամ մը ունեցած է աղօթքի եւ դործի ժողովներ: Ներկաներու միջին թիւը եղած է 15-25:

Ձեռնարկները եղած են ընկերական հաւաքոյթներ եւ ճաշկերոյթ:

Տարեկան մուտքը եղած է 200 տոլար:

Երիտասարդաց Քրիստ. Ընկ.— Անդամներու թիւն է 15, 8-ը արական եւ 7-ը՝ իգական: Ընթացիկ տարւուան մէջ ընդունուած են 2 նոր անդամներ:

Երգիչ եռուբ.— Մասնաւոր պարագաներու միայն երգիչ իւրմբ ունեցած են:



ՈՒՒՍԹ ՓՈՒԼՄԸՆԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ (ՄԻՇԸՆ)

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ Հ. ԱՇՃԵԱՆ

3435 Herndon Ave., Chicago, Ill.

Տարիներէ ի վեր փոքրաթիւ այս Աւետարանական համայնքին մէջ Աւետարանի քարոզութիւնը յառաջ տարուած է այցելու հովիւներու կողմէ պատահական ժամանակներու մէջ: Իբր կազմակերպուած համայնք դործունէութիւնը սկսած է 1925-ին, յորմէ հետէ ճանչցուած է իբրեւ ճիւղ Շիքաիօի Հայ Աւետ. Եկեղեցիին եւ պաշտամունքները կանոնաւորապէս ամէն Կիրակի կատարուած են Ամերիկեան «Քրմիւնիթի Չըրչ»ին մէջ:

Հաղորդական անդամներու թիւն է 12, որմէ երկուքը այր եւ տասը՝ կին:

Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 45, իսկ ամբողջ հայ դպրութիւնը՝ 400:

Կիրակնօրեայ պաշտամանց նշաններու թիւը եղած է 15, իսկ շաբաթամբ թիւը աղօթաժողովներունը՝ 7:

Հաղորդութեան Ս. Խորհուրդը մատակարարուած է 2 անգամ ու կատարուած է 2 մկրտութիւն եւ 1 պսակադրութիւն:

Տարեկան պիւտճէն է 440 տոլար, որոյ 200-ը դոյա-ցած է ժողովուրդէն իսկ մնացեալը ստացուած է Հօմ Միչընէրի Սօսաիթիէն:

Աւետարանչական Ընկերակցութեան տրուած է 11 տոլար:

Հովիւը իր պաշտօնավարութեան ձեռնարկած է 1929-ին:

Ամէն շաբաթ կանանց աղօթաժողովներ կանոնաւորաբար տեղի ունեցած են տուններու մէջ:

Կիրակնօրեայ պաշտամանց իրենց մասնակցութիւնը բերած են Տիար Մ. Օտեան եւ Աւետ. Միութեան նախագահը՝ Վեր. Ա. Պ. Հիւսեան:



**ՈՒԷՍԹ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՀԱՅ ԵՐԻՑԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑԻ**

Corner Hudson and 6th Sts., West New York, N. J.

ՀՈՎԻԻ ՎԵՐ · ԱՐՍԷՆ Ա · ԿԷՕՐԿԻՋԵԱՆ

581 Dewey Ave., Grantwood, N. J.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Իբրև եկեղեցի կազմակերպուած է Դեկտ. 1899-ին :  
Շէնքը կառուցուած է 1928, Յունիս 24-ին, ներկայ հովիւի  
պաշտօնավարութեան շրջանին եւ անոր ջանքերով :

Արժէքն է 50,600 տարար :

Հաղորդական անդամներու թիւն է 107, որմէ 43-ը

արական եւ 64-ը իգական են : Աւետարանական համայնքի  
մօտաւոր թիւն է 400 :

Կիրակնօրեայ պաշտամանց ներկաներու միջին թիւը  
եղած է 80-100, իսկ աղօթաժողովներունը՝ 9 :

Մատակարարուած է 4 անգամ Հաղորդութեան Ս ·  
Խորհուրդ եւ կատարուած է 4 մկրտութիւն, 4 յուղար-  
կաւորութիւն եւ 1 սրահադրութիւն :

Տարեկան պիւսճէն է \$5314.64, որուն \$675.00-ը ար-  
տաքին ազրիւրէ ստացուած է :

Աւետարանական Միութեան տրուած է \$40.00 եւ Ա-  
ւետարանչականին՝ \$229.00 :

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի  
Օգոստոս 1, 1925-ին :

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ**

Տիկնանց Օժանդակ Ընկերակցութիւն. — Կազմուած  
է Մայիս 13, 1914-ին : Անդամուհիներու թիւն է 54 :

Ձեռնարկները եղած են "Get together," ճաշկերոյթ,  
փէքէյճ փարթի, քաֆէթէրիա, թի փարթի, Միջինքի  
փարթի, սթրօպէրի փարթի եւ ներկայացում :

Տարեկան մուտքը եղած է \$452.49 :

Անդամական ժողովներ տեղի ունեցած են ամիսը ան-  
գամ մը : Ներկաներու թիւը եղած է միջին հաշուով 14 :

Երիտ. Բրիտ. Ընկ. — Կազմութեան թուականը՝  
Փետր. 1909 : Անդամներու թիւն է 25 : Ամէն Կիրակի ե-  
րեկոյ կ'ունենայ իր կանոնաւոր ժողովները կրօնական  
հանդամանքով : Ժողովներու ներկայ եղողներու միջին  
թիւն է 21 :

Ձեռնարկները եղած են 2 ներկայացումներ մե ըն-  
կերակցութեան Մենդեան փարթին :

Տարեկան մուտքը եղած է 245.07 :

Նախագահն է Տիար Տիգրան Քէօճնէլեան, որ միւս-  
նոյն ատեն նախագահն է Միջ-նահանգային Երիտ. Ջա-

նից Ընկերակցութեան եւ նոյնպէս Նախագահ Հըտտըն Քաունթիի բոլոր Բողոքական Եկեղեցիներու Երիտ. Զանից Ընկերակցութեանց :

Այրերու Եղբայրակցութիւն.— Անդամներու թիւն է 24: Ունեցած է 2 դասախօսութիւն, 2 ճաշկերոյթ, դաշտային պաշտամունք մը եւ հանդէս մը:

Կիրակնօրեայ Դպրոց.— Աշակերտաց թիւն է 74, որ բաժնուած է 7 կարգերու:

Դասախօսութեանց ընդուն է պրոտիկ երկու կարգերուն՝ հայերէն, մնացեալ հինգին՝ անգլիերէն:

Երգիչ խումբ.— Անդամներու թիւը կը դանազանի, սովորաբար 25, որոնք երկու շաբաթը անգամ մը կ'երգեն պաշտամունքի ատեն: Առաջնորդն է Տիար Խ. Պուճիգանեան, որ երկու տարիէ ի վեր կը մարզէ խումբը եւ կը վարէ երգեցողութիւնը:

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հայ Առաք. Եկեղեցւոյ հետ գործակցաբար յիշատակած է Վարդանանց Տօնը:

Բեմական ծառայութեան մասնակցած են Վերք. Ա. Յարութիւնեան, Խ. Կ. Պէննէեան եւ Ե. Աղնաքեան:

Եկեղեցին նաեւ վայելած է այցելութիւնը Աւետ. Միութեան Վարչութեան նախագահին եւ փոխ-նախագահին:

Հովիւը առանձին հոգեւոր խօսակցութիւններ ունեցած է անհատներու հետ եւ ատիկա զգալապէս ազգած է եկեղեցիի հոգեւոր զարգացման վրայ:

Հովիւին ջանքերով եւ խմբագրութեամբ 8 տարիէ ի վեր վանոնաւորապէս հրատարակուած է թերթիկ մը, որ ներկայ տարւոյ Յունուարին «Եկեղեցի» անունով եւ աւելի ձոխ բովանդակութեամբ լոյս տեսնել սկսաւ:

### ՓԷԹԸՐՍԸՆԻ ՀԱՅ ԵՐԻՑԱԿԱՆ ՄԻՇԸՆ

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ԱՐՍԷՆ Ա. ԿԵՕՐԿԻՋԵԱՆ

581 Dewey Ave., Grantwood, N. J.

Այս միջընը կազմակերպուած է 1899-ին: Հաղորդական անդամներու թիւն է 51, որոնցմէ 18-ը արական եւ 30-ը իգական են: Այս տարի անդամակցած են 6 նոր անդամներ: Աւետարանական համայնքի՝ մօտաւոր թիւն է 150:

Կիրակնօրեայ պաշտամանց ներկաներու միջին թիւը եղած է 45, իսկ աղօթաժողովներունը՝ 12:

Մատակարարուած է 3 անգամ հաղորդութեան Ս. Խորհուրդը եւ կատարուած է 1 մկրտութիւն եւ 1 յուզարկաւորութիւն:

Տարեկան պիւտճէն է \$817.71, որուն \$320.00-ը արտաքին աղբիւրէ ստացուած է:

Աւետ. Միութեան տրուած է \$9.58, իսկ Աւետարանչականին՝ \$35.00:

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկըսի Հոկտ., 1925-ին:

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկնանց Եկեղեցասիրաց Միութիւն.— Կազմուած է 1915-ին: Անդամուհիներու թիւն է 18: Աւելցած են 2 նոր անդամներ: Իր ձեռնարկները եղած են ներկայացում, դաշտահանդէս, եւ այլն:

Տարեկան մուտքը եղած է \$91.00:

Անդամական ժողովներ տեղի ունեցած են երկու շաբաթը անգամ մը իրրեւ աղօթաժողովներ եւ ապա նկատի առնուած են Միութեան ընթացիկ գործեր:

Ներկաներու թիւը եղած է միջին հաշուով 12: Օտանդակած են Հայ Աւետարանչականին, Հ. Բ. Ը. Միութեան եւ Բրբախնամին:

Երիտ. Ջանից Ընկերակցութիւն. — Կազմուած է Հոկտեմբեր, 1931-ին: Անդամներու թիւն է 25, որոնցմէ 9 արական, 16-ը՝ իշական: Այս տարի երկու նոր անդամներ ընդունուած են: Ամէն Ուրբաթ երեկոյ կ'ունենայ իր կանոնաւոր ժողովները՝ կրօնական հանդամանքով: Ներկայ եղողներու միջին թիւը եղած է 18:

Ձեռնարկները եղած են երկու ներկայացում, Ընկերութեան կազմութեան տօնակատարութիւն եւ դաշտահանդէս:

Տարեկան մուտքը եղած է \$91.00:

Վերջերս կազմուած է նաեւ Պատանիներու Ջանից Ընկերակցութիւն, որ ունի 26 անդամներ: Ասոնք եւս ամէն Ուրբաթ կանոնաւորապէս կ'ունենան իրենց անդամական ժողովները Երիտ. Ջանից Ընկերակցութեան Վարչութեան հսկողութեան ներքեւ:

Եկեղեցւոյ Ընդհ. Գործունէութիւն. — Եկեղեցւոյ ընդհանուր գործունէութիւնը եղած է շատ լաւ: Պաշտամունքի ներկաներու թիւը, մանաւանդ Յունուարէն ասպին, եռապատկուած է: Յաճախ 80-100 ունկնդիրներ ներկայ կ'ըլլան: Ինչ որ ամէնէն ուրախաօրթ երեւոյթ կարելի է սեպել՝ ժողովուրդին իրարու հանդէպ ունեցած սէրն ու գուրգուրանքն է, եւ գործին յոռաջգիւծութեան համար թախած իրենց անշահախնդիր ջանքերը: Հովիւր առանձին հոգեւոր խօսակցութիւններ ունեցած է անհատներու հետ եւ յաճախակի այցելութիւններ տուած: Այս պարագան զգալապէս ազգած է եկեղեցիի հոգեւոր կեանքի զարգացման:

## ՈՒՕՔԻԿԸՆԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՀՈՎԻԻ ՎԵՐ. Յ. Մ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

573 Oak Street, Waukegan, Illinois

1. — Եկեղեցւոյ Արտաքին Պատկերը. —

Կազմուած է 1928-ի Յունիսին: Անդամներու ներկայ թիւն է 21, իսկ Աւետարանական համայնքի թիւն է աւելի քան 50: Ամբողջ հայ զաղութը կը հաշուուի մօտ 125 ընտանիք, աւելի քան 400 անձ:

Կիրակնօրեայ պաշտամանց ներկայներու միջին թիւը եղած է 28, իսկ շաբաթամիջի աղօթաժողովներունը՝ 12: Այս տարի աւելցած են չորս հաղորդական անդամներ: Հաղորդութեան Մ. Խորհուրդը մատակարարուած է երկու անգամ: Կատարուած են վեց մկրտութիւններ:

Աւետարանական Միութեան զրկուած է \$5.25, իսկ Աւետարանչականին եղած խոստումն է \$10.00: Եկեղեցւոյ պիւտճէն հաւասարակշռուած է:

2. — Կազմակերպութիւններ. —

ա. Տիկնանց Աղօթքի Ժողով. — Կազմուած 1922-ին, 10 անդամուհիներով: Աղօթաժողովներուն ամէն Չորեքշաբթի ներկայ եղած են միջին հաշուով 10:

բ. Կիրակնօրեայ Դպրոց. —

Դպրոցը ունի չորս կարգեր՝ 35 աշակերտներով:

գ. Հայ Դպրոց, գործակցութեամբ զաղութիս այլ եւ այլ մարմիններու, 25 աշակերտներով:

դ. Տղայոց Ակումբ, Կրտսեր Օրիորդաց Ակումբ, Օրիորդաց Խաչակիր Ակումբ, Պոյ Սփաւքներ:

ե. «Վկայից Դաս» Երգչախումբ, 15 անդամներով:

Սովորական պաշտամունքներէ եւ աղօթաժողովներէ զատ արուած են ներկայացումներ, հանդէսներ, մոզական լսարաններ, զասախօսութիւններ, եւ այլն:

Այս բոլոր ձեռնարկներն ալ եղած են ընդհանուր գաղութի համար :

Եկեղեցական տօնական օրերէ զատ հանդիսաւոր կերպով տօնակատարուած է Վարդանանցն ու Խրիմեան Հայրիկի մահուան 25-ամեակը :

Մեծ շուքով տօնուեցաւ նաեւ Եկեղեցւոյ կազմութեան 5-րդ տարելիցը :

Տրուած են ճաշկերոյթներ եւ թէյասեղաններ :

Հովուի եւ անդամներու կողմէ հողեւոր այցելութիւններ տրուած եւ ժողովներ կազմուած են շրջակայ հայ գաղութներէ ոմանց մէջ :

Եկեղեցին հաճոյքն ունեցած է ընդունելու այցելութիւնը Միութեան նախագահ Վեր. Ա. Պ. Հիւսեանի, նաեւ Տիար Կ. Թ. Փուշմանի, Վեր. Հ. Յ. Աշճեանի եւ այլոց :

3. — Եկեղեցւոյ Թերթիկը. — Եկեղեցւոյ Հովուի ջանքերովը հրատարակուած է Աղղային-Կրօնական Երկչաբաթաթերթ մը, «Հայ Խաչակիր», չորս մեծադիր էջերով եւ յաւելուածական լուրերով : Այս թերթիկը բաժանորդներ ունեցած է Իլլինոյ Նահանգէն զատ 15 այլ նահանգներու մէջ, ինչպէս նաեւ արտասահմանի 7 երկիրներու մէջ :



## ՊԻՆԿՆԵՄԹԸՆԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ — ՄԻՇԸՆ

Binghamton, N. Y.

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

655 South Ave., Syracuse, N. Y.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Այս առաքելութիւնը (միշըն) կազմակերպուած է 1913-ին, իսկ վերակազմուած Սեպտ. 5, 1924-ին ներկայ հովիւի ջանքերովը :

Հաղորդական անդամոց թիւն է 30, որոնցմէ 12-ը այր, 18-ը՝ կին, իսկ Աւետարանական համայնքին մօտաւոր թիւն է՝ 100 :

Կիրակնօրեայ պաշտամունքները կը կատարուին երկու շաբաթը անգամ մը, տեղւոյն Ամերիկեան Ժողովական Եկեղեցիին մէջ : Բնկնդիրներու միջին թիւը եղած է 40, իսկ ազօթաժողովներունը, որոնք տուններու մէջ կը կատարուին՝ 15 :

Երեք անգամ մատակարարուած է Հաղորդութեան Ս. Խորհուրդը եւ տեղի ունեցած է մէկ յուղարկաւորութիւն :

Տարեկան պիւտճէն է 675 տոլար, որուն 137-ը ժողովուրդը կուտայ, իսկ մնացեալը արտաքին աղբիւրէ կը ստացուի :

Աւետարանական Միութեան տրուած է 5, իսկ Աւետարանչականին՝ 15 տոլար :

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի Յուլիս, 1924-էն :

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Միութիւն.— Կազմուած է 1924-ին: Անդամուհիներու թիւն է 18: Այս տարի աւելցած են 2 նոր անդամներ:

Երկու շաբաթն անգամ մը տեղի ունեցած են ազոթաժողովներ տուներու մէջ հովիւին առաջնորդութեամբ:

Տարեկան մուտք ունեցած է 35 տուար: Չեոնարկները եղած են հացկերոյթ եւ կերակուրի վաճառում:

Կիրակնօրեայ Դպրոց.— Տեղական Ամերիկեան Ժողովական Եկեղեցիին հետ միասնաբար կը շարունակուի Կիրակնօրեայ Դպրոցը: Աշակերտաց թիւն է 35:

Երգիչ Խումբ.— Կը բաղկանայ 6 անդամներէ:

Հայերէն Լեզուի Դպրոց.— Գաղութին երկու հայ դպրոցներէն մին կը շարունակուի հովիւին հսկողութեան ներքեւ: Աշակերտաց թիւն է 15: Ուսուցչուհին է Օր. Պ. Փանոսեան:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՒՆՆԵՐ

Հայ Աւետ. եւ Հայ Առաքելական համայնքի փոխադարձ յարաբերութիւնները եղած են սիրալիք: Աւետ. համայնքը մասնակցած է Հայ Առաքելական Եկեղեցիի մէջ վատարուած Վարդանանց եւ Նահատակաց տօնակատարութեանց:

Կիրակնօրեայ պաշտամանց ներկայ եղողներու թիւը զգալի յաւելում ունեցած է:

Հոգեւոր կեանքը ժողովուրդին մէջ խորացնելու համար ի գործ դրուած ջանքերը շօշափելի արդիւնք տրւած են:

ՀԱՅ ԵՐԻՑԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

ՍԻՐԱՔԻԻԶ, ՆԻՒ ԵՈՐՔ

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

655 South Ave., Syracuse, N. Y.

Այս առաքելութիւնը (միշըն) կազմուած է 1914-ին եւ վերակազմուած՝ Յուլիս 5, 1924-ին, յրմէհետէ շարունակած է իր գործունէութիւնը:

Հաղորդական անդամներու թիւն է 20, որմէ 8 ալրեր եւ 12-ը կիներ են:

Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 70 անձ:

Կիրակնօրեայ պաշտամունքներ տեղի ունեցած են կանոնաւորապէս Ամերիկեան Եկեղեցիի մը մէջ: Ներկաներու միջին թիւը եղած է 20-25, իսկ շաբաթամիջի ազոթաժողովներունը՝ 10-14: Եկեղեցիի հանդէպ ժողովուրդի հետաքրքրութիւնը զգալապէս աճած է:

Հաղորդութեան Ս. Խորհուրդը մատակարարուած է 2 անգամ:

Տարեկան պիւտճէն է 800 տուար, որուն 100-ը ժողովուրդէն, իսկ մնացեալը Երիցական Միշընէն կը ստացուի:

Աւետարանչական Ընկերակցութեան տրուած է 10 տուար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Միութիւն.— Կազմակերպուած է 1924-ին: Անդամակցութեան թիւն է 12:

Ներկայ տարուան ձեռնարկները եղած են ճաշկերոյթներ, ընկերային հաւաքոյթներ եւ պաղար: Մուտք եղած է 25 տուար:

Երգիչ հումբ — Կը բաղկանայ 7 անդամներէ : Ութը տարիներէ ի վեր երգիչ խումբին կ'առաջնորդէ Տիգ. Յ. Խաչատուրեանը :

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Հովիւին եւ ժողովուրդին միացեալ ջանքերով գործը յառաջ տարուած է յաջողութեամբ :

Տնտեսական տագնապի պատճառաւ հայկական դանազան գաղութներու մէջ, ուր կայ 2000-ի մօտ հայութիւն մը, դանց առնուած են հովուական այցելութիւններն ու Աւետարանչական գործը :

Հանգիստաւորապէս կատարուած են Վարդանանց եւ Հայ Նահատակաց տօները :



ԾԱՆՕԹ. — Աւետ. Միութեան կազմի խմբակարգ ամբողջութիւն չէ, ոմանց նկարը չի գտնուելուն համար :



### ՊՈՍՏՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Porter Square, Cambridge, Mass.

ՀՈՎԻԻ ՎԵՐ. ՍԱՄՈՒԵԼ Յ. ՀԱԼԼԱՃԵԱՆ

31 Everett St., Arlington, Mass.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եկեղեցին կազմուած է Յուլիս 5, 1908-ին Պոստոնի Քանկրիկէյճընը Հասուրի Փիլիլիթ Հօլին մէջ :

Այժմու գեղեցիկ շէքը զնուեցաւ 1929-ին, ներկայ Հովիւի պաշտօնավարութեան շրջանին եւ անոր ջանքերով :

Արժէքն է 70,000 տոլար : Պարտք կը մնայ 17,000 տոլար :

Հազորդական անդամներու թիւն է 166, 59 այր եւ 107 կին : Ներկայ տարեչրջանին եկեղեցւոյ անդամակցութեան մէջ ընդունուած են 8 նոր անդամներ : Իսկ համայնքի մօտաւոր թիւն է 700-800 :

Կիրակնօրեայ պաշտամանց յաճախողներու միջին թիւն է 200-250, իսկ աղօթաժողովներունը՝ 20 :

Տարուան ընթացքին տեղի ունեցած են 7 սրահ, 13 մկրտութիւն, 4 մահ :

Տարեկան պիւտճէն է 5000 տոլար, որ ամբողջապէս կը հոգացուի ժողովուրդի նուէրներովը :

Եկեղեցին ինքնապահ է :

Աւետարանչական Ընկերութեան տրուած է 385 տոլար :

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի 1926-էն :

#### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկնացի Բարեսիրական Ընկերութիւն.— Ընկերութիւնը կազմակերպուած է շուրջ 30 տարի առաջ : Անդամուհիներու ներկայ թիւն է 65 : Ընթացիկ տարուան մէջ 9 նոր անդամներ անդամակցած են Ընկերութեան :

Ընկերակցութիւնը ունեցած է այս տարի եռանդուն եւ օգտակար գործունէութեան շրջան մը : Իր ձեռնարկները եղած են ճաշկերոյթներ, ընկերական ժամանցներ, այցելութիւններ, աղօթաժողովներ եւ Tag Day : Տարեկան մուտքը եղած է 800 տոլար : Ընկերութիւնը եկեղեցիի ընթացիկ ծախուց մասնակցելէն զատ, ստանձնած է մանկապարտէզի մը հոգատարութիւնը Պէյրութի մէջ, որոյ համար ամէն տարի կը վճարէ 300 տոլար : Մասնակցած է նաեւ ուրիշ բարեսիրական ձեռնարկներու : Ամիսն անգամ մը ունեցած է իր կանոնաւոր ժողովները, որոնց ներկայ գանուողներու միջին թիւը եղած է 25-30 :

Քրիստոնէական Ջանից Ընկ.— Ունի 55 անդամներ : Ունեցած է իր կանոնաւոր հոգեւոր ժողովները, երկու շաբաթը անգամ մը, որոնց ներկայ գտնուած են միջին հաշուով 35-40 անձեր :

Չեռնարկները եղած են ներկայացումներ, հանդէսներ եւ երեկոյթներ :

Տարեկան մուտքը եղած է 150 տոլար :

Ընթացիկ տարուան մէջ 5 նոր անդամներ իրենց անդամակցութիւնը բերած են Միութեան :

Կիրակնօրեայ Դպրոց.— Աշակերտաց թիւն է 45 չափահաս իսկ 60 փոքր, որոնք բաժնուած են 6 կարգերու :

Երգիչ Խումբ.— Անդամներու թիւը կը զանազանի, միջին հաշուով 25 :

#### ԵԿԵՂԵՑՒՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

Հանդիսաւոր պաշտամունքներ տեղի ունեցած են Վարդանանց, Նահատակաց, Խրիմեան Հայրիկի մահուան 25-ամեակի տօներուն առթիւ :

Շքեղ հանդիսաւորութեամբ կատարուած է եկեղեցւոյ շէնքի վերընծայման պաշտամունքը ի ներկայութեան եւ մասնակցութեամբ Ամերիկեան կարեւոր բեմերու պաշտօնեայներու :

Եկեղեցին վայելած է նաեւ այցելութիւնը Աւետարանական Միութեան Վարչութեան՝ յանձին իր նախագահին եւ փոխ-նախագահին :



## ՊՕՍԹՈՆԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՀՈՎԻԻ ՎԵՐ . ԱՐԱՄ Թ . ՊԱՂՏԻԿԵԱՆ

59 Elm St., Stoneham, Mass.

Եկեղեցին կազմուած է Յունուար 10, 1915-ին : Հաղորդական անդամներու թիւն է՝ 82 դործօն եւ 30 ոչ-դործօն :

Աւետ . համայնքի թիւն է մօտաւորապէս 400 հոգի :

Կիրակնօրեայ պաշտամունքները տեղի կ'ունենան Պոստոնի Ա . Հայ Աւետ . Եկեղեցւոյ շէնքին մէջ — Porter Square, Cambridge, Mass.

Տարեկան պիւստձէն է 2800 տոլար , որուն 1060-ը կը դոյանայ ժողովուրդէն , իսկ մնացեալը կը տրուի Mass. Home Missionary Society-ի կողմէն : Կիրակնօրեայ պաշտամանց յաճախողներու թիւն է նուազագոյն 25 իսկ առաւելագոյն՝ 215 : Աղօթաժողովներու ներկայ եղողներու միջին թիւն է 15 հոգի : Աղօթաժողովները տեղի կ'ունենան տուններու մէջ : Ներկայ հովիւին պաշտօնավարութիւնը կ'սկսի 1920-էն :

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն .— Կազմուած է 1903-ին : Անդամուհիներու թիւն է 78 : Տարեկան մուտքը եղած է 150 տոլար : Ամիսը անգամ մը ունեցած է կանոնաւոր ժողովներ որոնց ներկայ դանուած են միջին հաշուով 35 հոգիներ : Տարուան ընթացքին տրուած են ճաշկերոյթ , երկրօթներ , այցելութիւններ : Հասոյթներ դոյացնելու համար գործածուած են տուփեր : Նաեւ անդամատուրք առնուած է :

Կիրակնօրեայ Դպրոց .— Կանոնաւորապէս դպրոց յաճախողներու միջին թիւը եղած է 15 , որոնք բաժնուած են երկու կարգերու :


Երգիչ Խումբ .— Կը բաղկանայ 17 անդամներէ : Խումբը զարկ տուած է պաշտամանց հոգեւորութեան :

Այրերու Երբայրակցութիւն .— Անդամներու թիւն է 29 : Ունեցած է դասախօսութիւններ եւ ընկերական ժամանցներ :

Անցեալ տարուան մէջ Աւետարանական Միութեան տրուած է 15 տոլար , իսկ Աւետարանչականին՝ 115 տոլար :

Տարուան ընթացքին Հաղորդութեան Ս . Խորհուրդը մատակարարուած է 4 անգամ : Տեղի ունեցած են 2 պատկ , 4 մկրտութիւն , 1 մահ : Ծնունդի , Չատկի , Վարդանանցի եւ Նահատակաց տօներու առթիւ տեղի ունեցած են հանդիսաւոր պաշտամունքներ : Մասնաւոր կարեւորութիւն տրուած է աղօթաժողովներու եւ անհատական տեսակցութեանց : Տեղի ունեցած են հացկերոյթներ , ընկերային ժամանցներ եւ ցուցադրուած են շարժական պատկերներ :





**ԱՐԱՐԱՏ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

Corner Salem St. and Brady Avenue  
Salem Depot, N. H.

ՀՈՎԻԻՒ ՎԵՐ • ՍՈԿՐԱՏ Մ • ՄԵԻԹԱՐԵԱՆ  
218-A Salem Street

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐՏԱԲԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Իրրեւ եկեղեցի կազմակերպուած է 1912-ին եւ չէնքը կառուցուած է 1913-ին Վեր. Գ. Պետրոսեանի պաշտօնավարութեան շրջանին: Արժէքն է \$4,500: Ունի երկցատուն, շինուած 1926-ին Վեր. Եփրեմ ճըռնաղեանի պաշտօնավարութեան ժամանակ եւ անոր ջանքերով: Արժէքն է \$5500.00:

Հաղորդական անդամներու թիւն է 37, որմէ 12-ը արական եւ 25-ը իգական են: Աստուգմէ 11-ը նոր անդամներ են:

Աւետարանական համայնքի մօտաւոր թիւն է 150, իսկ ամբողջ Հայ բնակչութեան թիւն է 300 (Մըթիւն եւ Սէյլըմ միասին հաշուելով): Կիրակնօրեայ պաշտամունքներուն ներկաներուն միջին թիւը եղած է 100, իսկ ազօթաժողովներունը՝ 12:

Եկեղեցւոյ տարեկան պիւտճէն է \$2000.00 որմէ \$1200-ը գոյացած է ժողովուրդէն եւ մնացելը ստացուած է Նիւ Հէմքշիրի Հօմ Միչընէն:

Աւետ. Միութեան արուած է \$6.75 եւ Աւետարանչական Ընկերակցութեան՝ \$20.50: Ներկայ հովիւի պաշտօնավարութիւնը կը սկսի Ապրիլ, 1927-էն:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ**

1.— Հաղորդական Անդամներու Միութիւն.— Կազմուած Գեղտ. 1931-ին: Ամէն ամսոյ վերջին Կիրակին ունեցած է իր ազօթքի եւ գործի ժողովը եւ տարւոյ մէջ մէկ անգամ ալ ընկերոյթ մը: Միութիւնն շատ օգնած է եկեղեցւոյ ներքին կարգապահութեան եւ հոգեւոր կեանքի յառաջդիմութեան:

2.— Կանանց Օժանդակ Միութիւն.— Կազմուած Յունիս 1, 1927-ին 20 անդամուհիներով: Ներկայ թիւն է 30: Ամիսը անգամ մը ունեցած է ազօթքի եւ գործի ժողովներ եւ տարւան մէջ՝ երեք ձեռնարկներ: Տարեկան մուտքը եղած է \$70.75:

3.— Երիտ. Քրիստ. Զանից Ընկերակցութիւն.— Կազմուած է Յունիս 3, 1927-ին, 11 անդամներով: Անդամներու ներկայ թիւն է 42, որմէ 15-ը արական եւ 27-ը իգական են: Ընկերակցութիւնը ամէն Կիրակի երեկոյ կանոնաւորաբար ունեցած է իր ազօթքի, երգեցողութեան ժողովները եւ ամիսը անգամ մը՝ գործի ժողով: Կազմակերպած է երեք ձեռնարկներ: Տարեկան եկամուտը եղած է մօտ \$120.00:

4.— Կիրակնօրեայ Դպրոց.— Աշակերտաց թիւն է 60, բաժնուած 3 կարգերու: Ներկաներու թիւին թիւը եղած է 40-45:

5.— Երգչախումբի անդամներու թիւն է 16:

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Հաղորդութեան Սր. Խորհուրդը մատակարարուած է 3 անդամ եւ կատարուած է 1 պատկազրութիւն, 5 մկրբատութիւն եւ 1 յուզարկաւորութիւն:

Ունի հայ լեզուի դպրոց եկեղեցւոյ հովանիին ներքեւ, որը անցեալ աշնան զաղութահայ հոգաբարձութեան մը հսկողութեան յանձնուեցաւ: Աշակերտներու թիւն է 40 եւ զաստիստութիւնները տեղի կ'ունենան երկու տարբեր տեղերու մէջ:

Աւետ. Միութեան կողմէն եկեղեցիին այցելութիւն տրուած է Վեր. Ա. Պ. Հիւսեանի եւ Վեր. Գ. Պետրոսեանի կողմէն:

Տօնած է Վարդանանցը:

Այս տարի եկեղեցին ունեցած է աչքատու յաջողութիւններ: Բարձրացած է կիրակնօրեայ պաշտամունքներուն սկզբներու թիւը: Երկու Բրիտ. Չանից Ընկերացութիւնը աճած է որակով եւ քանակով:

Ձեռնարկուեցաւ եկեղեցւոյ շէնքի ընդարձակման, որուն մեծապէս նպաստեց Կարմրի Գիւլի Ուսումն. Ընկերութեան կողմէն եւ վերաշինութեան յատկացուելու համար տրուած \$1000-ի նուէրը: Ժողովուրդը խոստացած է \$500: Ամբողջ ծախքը կը զնահատուի \$2500-ի: Գործը յառաջ կը տարուի մեծ ջանքով:



### ՀԱՅ ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ — ՏԻԹՐՕՅԹ

10320 Hamilton, Detroit, Mich

ՀՈՎԻՒ ՎԵՐ. Յ. Ա. ԲԱԹՕՉԵԱՆ

10320 Hamilton

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Իբրեւ եկեղեցի կազմակերպուած է 1920-ին եւ 1923-ին նահանգային կառավարութեան կողմէ վաւերացուած է — incorporated — իբրեւ օրինաւոր կրօնական հաստատութիւն մը:

Իր սեփական շէնքին տիրացաւ 1925-ին, Վեր. Ե. Խ. Ռչտունիի պաշտօնավարութեան շրջանին եւ անոր ջանքերով:

Շէնքը եւ յարակից երկրատուներ, միւսնոյն թուականին գնուած, արժած են 45,000 տոլար: Պարագ կը մնայ 18,000 տոլարի գումար մը:

1932 տոմարական տարուան գանձապետին ընդհանուր հաշուեկշիւը ցոյց կուտայ 3500 տոլարի երկամուտք մը: Այս գումարին 900 տոլարը ստացուած է արտաքին աղբիւրէ, իսկ մնացեալը՝ ժողովուրդի կամուտը նուէրներէ:

Աւետարանչականին տրուած է 100 տողար: Պիւտձէն հաւասարակչուած չէ:

Քաղաքիս Աւետարանական համայնքին թիւը մօտաւորապէս 225 ընտանիք կը հաշուուի:

Հաղորդական անդամներու թիւն է 102 — արք՝ 42, կանայք՝ 60: 75 ալ սչ-դործօն անդամներ:

Ներքին.— Հովիւն է Վեր. Յ. Ա. Գառթօղեան, որուն պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի 1932 Նոյ. 1-էն: Եկեղեցին կը կառավարուի կրկնակ մարմիններով: Հոգարարձութիւնով մը, որ կը բաղկանայ 9 հոգիներէ (3 սարկաւազ), եւ խնամակալութիւնով մը՝ 7 հոգիէ բաղկացեալ: 1932-ի ընթացքին Հաղորդութեան Սորհուրդը մատակարարուած է 3 անգամ եւ 33 անձինք եկեղեցւոյ անդամակցութեան մէջ ընդունուած են (դաւանանքով՝ 17, նամակով՝ 16): Մկրտուած են 25 մանուկներ: Մահերու թիւը եղած է 2: Ամուսնութիւն՝ մէկ:

Կիրակնօրեայ պաշտամանց ներկայ գտնուողներու միջին թիւը եղած է 175, իսկ ազօթաժողովներունը՝ 30:

Հանդիսաւոր կերպով կատարուած են Վարդանանց եւ Նահատակաց տօները:

Հովիւէն դատ մէկ տարուան ընթացքին հինգ հիւր քարոզիչներ քարոզած են բեմէն:

Եկեղեցին վախճուած է նաեւ այցելութիւնը Աւետ. Միութեան Նախագահին՝ Վեր. Ա. Հիւսեանի:

#### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն.— Կազմակերպուած է 1924-ին: Անդամակցութեան թիւն է 35: Հինգ նոր անդամներ անդամակցած են Ընկերակցութեան: Տարեկան մուտք եղած է \$75.00: Ունեցած է իր կանոնաւոր անդամական ժողովները: Ներկաներու միջին թիւը եղած է 15:


Երիտ. Քրիստոնէազան Ընկերակցութիւն.— Կազմակերպուած է 1924-ին: Անդամներու թիւն է 30 — 12 արական, 18 իգական: Երկու շաբաթը անգամ մը, Ուրբաթ օրեր, կանոնաւորաբար ունեցած է իր ժողովները, որոնց ներկայ եղած են միջին հաշուով 30 հոգիներ: Տարեկան մուտքը տակաւին վերջացած չէ: Երկու շաբաթը անգամ մը տեղի ունեցած են ընկերային հաւաքովիներ եւ հանդէսներ:

Կիրակնօրեայ Դպրոց.— Աշակերտաց թիւը եղած է 125, որոնք բաժնուած են 6 կարգերու: Տարեկան մուտքը եղած է \$56:

Երգիչ Խումբը.— Անդամներու թիւն է 16:

#### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ Երեք տարիներու համար եկեղեցին ապահոված է Վեր. Յ. Ա. Գառթօղեանի հովուական ծառայութիւնը: Քաջալերական է տեսնել որ հովիւին ջանքերուն շնորհիւ հաղորդական անդամներուն թիւը 65-էն 102-ի բարձրացած է կարճ ժամանակամիջոցի մը մէջ: Կիրանօրեայ պաշտամանց ներկաներու թիւը աչքատու աճում մը ցոյց կուտայ: Եկեղեցին աւելի յուսալից է ապագային համար:



**ՓՐԱՎԻՏԷՆՍԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ  
ԵՓՐԱՏ ԵԿԵՂԵՑԻ**

42 Hammond St., Providence, R. I.

ՀՈՎԻԻ, ՎԵՐ. ՆՇԱՆ Գ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

42 Hammond Street

ԸՆԳՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

**Արտաքին**

Իրբեւ եկեղեցի կազմակերպուած է 1891-ին եւ 1912-ին նահանգային կառավարութեան կողմէ վաւերացուած

է (incorporated) իրբեւ օրինաւոր կրօնական հաստատութիւն մը :

Իր սեփական շէնքին տիրացաւ 1912-ին, Վեր. Ստեփան Նազուպեանի պաշտօնավարութեան շրջանին, իսկ Վեր. Յ. Մ. Տեփոյեանի ջանքերով՝ ամբողջապէս նորոգութեան ենթարկուելով՝ աղիւսակերտ եղաւ եւ ներքնասրահը շինուեցաւ :

Արժած է 26,000 տոլար : Միակ պարտքը որ կը մնայ շէնքին վրայ, 7500 տոլարի գումար մըն է վճարելի Church Building Society-ի եւ State Conference-ի :

1932 տոմարական տարուան գանձապետին ընդհանուր հաշուեկշիւը ցոյց կուտայ 5000 տոլարի մուտք մը, որուն 1000 տոլարը ստացուած է արտաքին աղբիւրէ, իսկ մնացեալը ժողովուրդի կամաւոր նուէրներէ եւ եկեղացւոյ օժանդակ երեք կազմակերպութիւններէ :

Աւետարանական Միութեան տրուած է \$25,00, իսկ Աւետարանչականին՝ 284 տոլար : Պիւսձէն հաւասարակըչուած է :

Քաղաքիս Աւետարանական համայնքին թիւն է մօտաւորապէս 500 հոգի : Հաղորդական անդամներու թիւն է 174, արք 74, կանայք՝ 100 :

**Ներքին**

Հովիւն է Վեր. Նշան Գ. Սաչատուրեան, որուն պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի 1931-էն :

Եկեղեցին կը կառավարուի հոգաբարձութիւնով մը, որ կը բաղկանայ 7 հոգիներէ (2 ձեռնադրեալ սարկաւազ) :

1932-ի ընթացքին Հաղորդութեան Սորհուրդը մատակարարուած է 4 անգամ : Մկրտուած են 7 մանուկներ : Մահերու թիւը եղած է 4, ամուսնութիւն՝ 2 :

Կիրակնօրեայ պաշտամանց ներկայ գտնուողներու միջին թիւը եղած է 130, իսկ աղօթաժողովներունը՝ 10 :

Հանդիսաւոր կերպով Առաքելական Եկեղեցւոյ Հետ գործակցարար տօնուած է Վարդանանց, Ս. Թարգմանչաց տօները, ինչպէս եւ Ապրիլեան Նահատակաց սղատօնը :

Հովիւէն զատ մէկ տարուան ընթացքին երկու հիւր քարոզիչներ քարոզած են բեմէն : Եկեղեցին վայելած է նաեւ այցելութիւնը Աւետ . Միութեան Վարչութեան Դիւանին :

#### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Բարեսիրաց Ընկերակցութիւն .— Կազմակերպուած է 1902-ին : Անդամակցութեան թիւն է 60 : Տարեկան մուտք ունեցած է 1245 տոլար, որոյ 875-ը՝ ծաղիկի վաճառումէ գոյացած է :

Աւետարանչականին տրուած է 200 տոլար : Տասը թիւ «Հայաստանի Կոչնակ» նուիրած է զանազան մարմիններու եւ անհատներու : Օգնած է Մամէլթընի Թոքախտանոցին, Փարիզի Դպրոցասիրացին, Զուիցերիոյ Պրնիքն Դպրոցին, եւն . :

Նաեւ տուած է՝ \$200 Աւետարանական Միութեան, \$200 տեղական կարօտելոց եւ \$50 Հ. Բ. Ը. Միութեան :

Տասը տարիներէ ի վեր կ'ունենայ իր Ծաղիկի Օրը, որոյ հասոյթը կը յատկացուի վերոյիշեալ նպատակներուն :

Իր ձեռնարկները եղած են՝ հանգէս-խնջոյքներ, ներկայացումներ, ընկերային ժամանցներ, ամսական աղօթածոցովներ եւ դասախօսութիւններ :

Ամսական ժողովներուն ներկայ եղողներուն միջին թիւը եղած է 25-30 հոգի :

Երիտասարդաց Քրիստ . Զանից Ընկերակցութիւն .— Կազմակերպուած է 1912-ին : Անդամներու ներկայ թիւն է 41, որոնցմէ 17-ը արական եւ 24-ը իգական : Ընթացիկ

տարուան մէջ 6 նոր անդամներ ընդունուած են : Չեւնարկները եղած են կրօնական, գործի, դասախօսական եւ վիճարանական ժողովներ՝ ամէն Կիրակի, ի բաց առեալ ամառուան երկու ամիսները : Բոլոր ժողովներու սկզբնական պահը յատկացուած է աղօթքի : Տարեկան մուտքը եղած է 130 տոլար :

Այրերու Եղբայրակցութիւն .— Կազմակերպուած է 1930-ին : Անդամներու թիւն է 15 : Տուած է դասախօսութիւններ, վիճարանական ժողովներ, ընկերական ժամանցներ եւ ճաշկերոյթներ :

Կիրակնօրեայ Դպրոց .— Աշակերտաց թիւն է 50, բաժնուած՝ 4 կարգերու :


Երգիչ Խումբ .— Անդամներու թիւն է 20 :

#### Տարածական Գործունեութիւն (Extension)

Փութաքէթի մէջ, որ քաղաքէս 6 մղոն հեռու է, տարիէ մը ի վեր սկսուած է Առաքելութիւն մը որ հետզհետէ կ'աճի եւ կը կազմաւորուի :

#### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԻՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Ներկայ տնտեսական տագնապի օրերուն չափազանց գոհացուցիչ կը դանենք անդամներու կազմակերպութիւններու եւ համայնքի հոգեկան տրամադրութիւնը : Եփրատ Եկեղեցին միակ Աւետարանական Եկեղեցին ըլլալով Բօտ Այլընտ նահանգին մէջ, իր կրօնական եւ հոգեւոր խնամքը կը տարածէ ամբողջ նահանգի Աւետ . ժողովրդի վրայ, ինչպէս նաեւ Մէսէչոսէցէն Seekonk-ի եւ Սաութ Րիհօպրթի հայութեան վրայ :



**ՈՒՍԹՐԻ ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ**

Ormond St., Worcester, Mass.

ՀՈՎԻԻ ՎԵՐ. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

228 Highland Street

Ուսթրի Հայ Մարտիրոսաց Եկեղեցիին դոյութեան սկզբնաւորութիւնը կը գուզադիպի ասկից 52 տարիներ առաջ Եաղճեան ընտանեկան յարկին տակ գումարուած աղօթաժողովին: Այդ օրերուն հաղիւ 17 Հայեր կը գտնուէին Ուսթր որոնք կը կազմէին Ամերիկահայութեան առաջին գաղութը: Եկեղեցին կազմակերպուեցաւ 1901-ին, որ

Թուականին շինուեցաւ նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանական առաջին եկեղեցին Վեր. Խ. Կ. Պէննէկեանի պաշտօնավարութեան օրովը: Եկեղեցւոյ արժէքն է \$15000: Շէնքին վրայ սեւէ պարտք չկայ:

Վեր. Պէննէկեանի յաջորդեց Վեր. Կ. Մ. Մանուկեան, որուն պաշտօնավարութեան ընթացքին Մարտիրոսաց Եկեղեցիին մէջ (1918) կազմուեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը, ինչպէս որ Վեր. Խ. Կ. Պէննէկեանի օրով 1901-ին կազմուած էր Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւնը:

Հաղորդական անդամներու թիւն է 98, որու 63-ը իրական, իսկ 35-ը արական սեռէ են: Աւետարանական համայնքին թիւն է մօտ 300 հոգի:

Կիրակնօրեայ պաշտամանց միջին թիւն է 90-100: Աղօթաժողովներու միջին թիւն է 13: Հաղորդութեան Խորհուրդը կատարուած է 2 անգամ, յուզարկաւորութիւն 2 անգամ: Տարեկան պիւտճէն է մօտ \$3480, որուն 1560 տօլարը կուզայ Հօմ Միչընէն: Աւետարանչականին տրուած է 75 տօլար, իսկ Աւետարանական Միութեան՝ 25: Եկեղեցին ունի փողաւոր երգեհոն մը: Ներկայ հովիւին պաշտօնավարութիւնը կը սկսի Նոյ. 1, 1918-էն:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ**

Կանանց Բարեսիրական Ընկերութիւն. — Կազմուած Փետր. 1, 1899-ին: Անդամուհիներու թիւն է 36: Տարեկան մուտքը եղած է 296 տօլար: Ունեցած է հացկերսյութներ, ներկայացումներ, թէյյասեղաններ, դասախօսութիւններ, աղօթաժողովներ եւ այլերութիւններ:

Կիրակնօրեայ Դպրոց. — Աշակերտներու թիւն է միջին հաշուով 120: Ուսուցիչներու եւ պաշտօնէից թիւը 16: Նախորդ տարուան վրայ հարիւր առ հարիւր յաւելում ունեցած է: Այս տարի կազմուած է Մանկապարտէզ մը,

Կարի Բլրպ մը: Գպրոցը տուած է բազընք մը, հացկե-  
րոյթներ եւ ընկերական ժամանցներ:

Նիւ Ինկլընտի Միջ-Նահանգային Միութեան անդ-  
րանիկ ժողովը տեղի ունեցաւ Մարտիրոսաց Եկեղեցիին  
մէջ անցեալ Աշուն:


Երիտասարդաց Քրիստոնէական Զանկից Ընկերութիւն  
— Կազմուած է 1903ին. անդամներու թիւն է 15. անցեալ  
տարի աւելցած են 2 անդամներ: Տարեկան մուտքը եղած  
է 83 տուար: Ունեցած է ազօթաժողովներ, դասաստու-  
թիւններ, հացկերոյթներ եւ ընկերական ժամանցներ:

Երգեցիկ Խումբեր. — Մեծերու երգեցիկ խումբը ու-  
նի 18, իսկ փոքրերունը՝ 25 անդամներ: Երգեցիկ խում-  
բերուն առաջնորդը, Պր. Գէորգ Մ. Թովմաճանեան, 35  
տարիներէ աւելի ծառայած է եկեղեցիին՝ կատարեալ  
հաւատարմութեամբ:

Առաքելական Գործ. — Եկեղեցին ունի առաքելական  
գործ մը Հուայթընզիլի մէջ, ուր տեղի կ'ունենան շա-  
բաթական պաշտամունքներ ու կը տրուին հովուական  
այցելութիւններ: Ժողովներու յաճախողներուն միջին  
թիւն է 18: Անցեալ տարուան պիւտճէն էր 95 տուար:  
Միջբըրտի մէջ կայ ուրիշ առաքելական գործ մը, ուր  
ամիսը անգամ մը ազօթաժողովներ տեղի կ'ունենան: Ա-  
սոնցմէ գուրս հովուական այցելութիւններ կը տրուին  
Ուոթըր Բաունթի մէջ 15 քաղաքներու եւ գիւղերու մէջ  
ընակող Հայերուն:

Եկեղեցին կը կառավարուի 11 անդամներէ բաղկաց-  
եալ Սառն ժողովով մը որ ունի վերին հեղինակութիւն:  
Կան նաեւ զանազան յանձնախումբեր:

Եկեղեցին ունի ամսական թերթիկ մը:



## ՀԱՅ ՄԵԹՈՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

5901 Cedar Ave., Philadelphia, Pa.

ՀՈՎԻԻ ՎԵՐ. Մ. Բ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

2213 Green Street

Եկեղեցական կազմակերպութիւնը տեղի ունեցած  
է 1925-ին: 1929 թուին գնուած է տուն մը եւ կարգ  
մը փոփոխութիւններ կատարուելով, վերածուած է ազօ-  
թատեղիի: Եկեղեցին արժէքն է 10,000 տուար:



Հաղորդական անդամներու թիւն է 50: Կիրակնօրեայ պաշտամանց ներկաներու միջին թիւը եղած է նմանապէս 50, իսկ աղօթատոմարներու՝ 12:

Հաղորդութեան Ս. Խորհուրդ մատակարարուած է 6 անդամ եւ կատարուած է 2 միւրտութիւն:

Ընթացիկ տարուան զանձապետին ընդհանուր հաշուեկշիւը ցոյց կուտայ 1800 տոլարի մուտք մը, որուն 1200 տոլարը զույգացած է ժողովուրդի նուէրներովը, իսկ մնացածը ստացուած է արտաքին աղբիւրներէ:

Աւետարանչական Ընկերակցութեան արուած է §40-68:

Մասնակցած է տեղական Հայ եկեղեցիներու վարդապետաց հանդիսաւոր ատնակատարութեան:

Հովիւէն զատ տարուան ընթացքին բեմական ծառայութեան մասնակցած են վեր. Ա. Յարութիւնեան, Պատ. Պալեան եւ երկու Ամերիկեան հովիւներ:

Հովիւի կողմէն անհատներու արուած այցելութիւնները ծառայած են զօրացնելու անոնց մէջ կրօնական փորձառութիւնը:

Հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի Յունիս 13, 1921-էն:

#### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն.— Կազմուած է 1929-ին: Անդամներու ներկայ թիւն է 12: Շարաթամբ միջի աղօթատոմարներ ունեցած է կանոնաւոր կերպով, որոնց ներկայ գտնուած են միջին հաշուով 7 անձեր:

Երիտ. Քրիստոնէական Ընկ.— Կազմուած է 1924ին: Անդամներու թիւն է 25, որոնցմէ 10-ը արական եւ 15-ը իգական են: Աստուծոյ .5-ը ներկայ տարուան մէջ միացած են Ընկերակցութեան:

Ընկերակցութիւնը կ'անդամակցի Միջնահանգային Երիտ. Քրիստոնէական Ընկերութեան: Նահատակաց Հայ

Աւետ. Եկեղեցիի Ե. Ք. Ընկ.եան հետ յաճախակի ունեցած է միացեալ պաշտամունքներ որք ծառայած են նոր սերունդի մէջ վառ պահելու կրօնական եւ հոգեւոր զգացումները:

Այս ժողովներէ զուրս ունեցած է իր կանոնաւոր կրօնական ժողովները, որոնց ներկայ եղողներու միջին թիւը եղած է 30:

Կիրակնօրեայ Դպրոց.— Աշակերտաց թիւն է 45. բաժնուած 4 կարգերու:

Կիրակնօրեայ պաշտամանց մէջ իր կարեւոր բաժինը ունեցած է նաեւ Երգիչ Խումբը:

---

#### «ԲԱՆԲԵՐ»

(Ամսաթերթ)


Ֆրանսայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու պաշտօնաթերթը: Կը հրատարակուի երկու լեզուներով — հայերէն եւ քուրճերէն:

Խմբագրական Մարմինը — Հայերէնին  
վեր. Յ. Ն. Ղազարոսեան  
Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան  
Պատ. Սամուէլ Պազգալեան:  
Թուրքերէնին.— Ժօզէֆ Կ. Պարսուսեան:

Տարեկան բաժնեգին  
Ֆրանսա եւ Սուրիա 15 ֆրանք:  
Արտասահման 20 ֆրանք կամ 80 սէնք:

Հասցէ՝

Red. "Panpere" c/o Rev. H. N. Ghazarosian  
7 Rue Papere, Marseille (France)



## ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

6029 Ludlow St., Philadelphia, Pa.

ՀՈՎԻԻ ՎԵՐ. Յ. Մ. ՏԵՓՈՅԵԱՆ

6027 Ludlow Street

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ 1

Իբրև Եկեղեցի կազմակերպուած է Յունիս, 1929-ին :  
Շէնքը կառուցուած է 1924-ին : Արժէքն է 50,000 տոլար :  
Ունի երիցատուն, շինուած 1928-ին, 12,000 տոլար  
արժողութեամբ :

Թէ՛ Եկեղեցին և Թէ՛ երիցատունը շինուած է Վեր.  
Բ. Ս. Լեւոնեանի պաշտօնավարութեան շրջանին և ա-  
նոր ջանքերով :

Հաղորդական անդամներու թիւն է 200, որմէ 77-ը  
այր, 123ը կին ևն : Աւելցած ևն 30 նոր անդամներ : Աւե-  
տարանական համայնքի մօտաւոր թիւն է 650 : Կիրակ-  
նօրեայ պաշտամունքները կը կատարուին երեք լեզուներ  
ով, հայերէն, անգլիերէն և թրքերէն :

Ունկնդիրներու միջին թիւը եղած է 150, իսկ աղօ-  
թաժողովներունը՝ 25-30 :

Հինգ անգամ մատակարարուած է Հաղորդութեան  
Ս. Սորհուրդ և կատարուած է 4 պսակաղբութիւն, 15  
մկրտութիւն և 3 յուզարկաւորութիւն :

Եկեղեցին ինքնապահ է : Տարեկան պիւտձէն է 5000  
տոլար որ ամբողջութեամբ, ինչպէս միշտ, դոյացած է  
ժողովուրդի կամաւոր նուէրներովը :

Աւետարանական Միութեան տրուած է 25 և Աւե-  
տարանչականին՝ 200 տոլար :

Ներկայ հովիւի պաշտօնավարութեան շրջանը կ'սկսի  
Սեպտ. 1930-էն :

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն. — Կազմուած է  
1920-ին : Անդամուհիներու թիւն է 45 : Տարեկան մուտքը  
եղած է 400 տոլար : Ունեցած է հինգ կարեւոր ձեռնարկ-  
ներ :

Երիտասարդաց Քրիստոնէական Ընկ. — Աւագ և  
կրտսեր խումբեր : Կազմուած ևն 1920-ին : Անդամներու  
թիւն է 75 : Տարեկան մուտքը 200 տոլար եղած է : Ունե-  
ցած է 7 կարեւոր ձեռնարկներ : Ասոնք մեծ եռանդով և  
արդիւնաւորութեամբ իրենց ժողովները կը վարեն :

Այրերու Եղբայրակցութիւն. — Անդամներու թիւն է  
40 : Ժողովներուն ներկայ եղած ևն միջին հաշուով 80  
անձեր :

Կազմակերպուած է 8 դասախօսական, 2 վիճարանա-  
կան ժողովներ և 4 անգամ ցուցադրուած ևն շարժա-  
պատկերներ :

Կիրակնօրեայ Դպրոց. — Աշակերտաց թիւն է 120 :  
Բաժնուած է 9 կարգերու : Տարեկան մուտք ունեցած է  
150 տոլար : Ունին Ս. Գիրք ուսանողներու կարգ մը —  
Bible Class — 30 անդամներէ բաղկացած — երիտա-  
սարդ — որոնք հովիւին առաջնորդութեամբ Ս. Գիրքը  
կ'ուսանին :

Երգիչ Խոււր.— Ունի աւագ եւ կրտսեր խումբեր :  
Անդամներու թիւն է 35 :

**ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ**

Հողարարձութիւնն ու Խնամակալութիւնը Հովիւին  
հետ եւ առանձնաբար ամէն ջանք թափած են եկեղեցւոյ  
հոգեւոր մակարդակը բարձր պահելու համար, եւ իրենց  
այս ջանքերը արդիւնաւորուած են : Հաղորդական ան-  
դամներու թիւը 170-էն 200-ի բարձրացնելով :

Իեմին իրենց օժանդակութիւնը բերած են Վերա-  
պատուելիներ Յ. Ե. Եարտրմեան, Ա. Տարագճեան, Ս.  
Բրդեան, Ա. Յարութիւնեան, Կ. Գալէմքեարեան, Պատ.  
Մ. Պալեան եւ Պատ. Մ. Փիրանեան :

Եկեղեցին վախճան է այցելութիւնը նաեւ Միւս-  
թեան Վարչութեան նախագահ Վեր. Ա. Պ. Հիւսեանի,  
փոխ-նախագահ Գ. Պետրոսեանի եւ Քարտուղար Վեր.  
Ա. Ա. Կէօրկիզեանի :

Ձատկի առթիւ 25 երիտասարդ-երիտասարդուհիներ  
եկեղեցիին անդամակցած են :

Երիտ. Քրիտ. Ընկերակցութիւնը Հայ Մեթոտական  
Եկեղեցւոյ Ձանասիրացի հետ միասնաբար 5-6 Աւետա-  
բանչական հրատարակային հոգեւոր ժողովներ ունեցած  
են :

Տրուած են 8 ներկայացում, 8 երգահանութիւն, 2 մըրց-  
ման հանդէս եւ 3 ճաշկերոյթ :

Հայ Առաք. Եկեղեցւոյ հետ զործակցաբար անուանած  
է Վարդանանց, իսկ առանձինն՝ Խրիմեան Հայրիկի մահ-  
ուան քսանեւհինգեամկի, Հայ Նահատակաց, Հայ Թարգ-  
մանչաց, Գրիգոր Լուսաւորչի եւ Սանդուխտ Կոյսի տո-  
ները :

Եկեղեցին ունեցած է իր սեփական սիւնակը տեղա-  
կան «Կոռնիկ» թերթին մէջ եւ հովիւր եկեղեցւոյ ծանու-  
ցումներէն եւ տեղեկատուութիւններէն զատ, հոգեւոր  
կարճ քարտզներ ղետեղած է անոր մէջ ամէն շաբաթ :

**ԹՈՒԱՊԱՏԿԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ 1933 ՏԱՐՈՒԱՆ**

Կազմակերպեալ եկեղեցիներ	14
Առաքելութիւններ	12
Հովիւներ	
Չեռնաղբեալ	16
Արտօնեալ	2
	18
Հաղորդական անդամներու թիւը	1847
Աւետարանական համայնքին մօտաւոր թիւը	8750
Կիրակնօրեայ պաշտամանց ունկնդիրներու միջին թիւը ամէն Կիրակի	1869

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ**

Կանանց Օժանդակ Ընկերակցութիւն	
Անդամներու թիւը	756
Դրամական ընդհ. մուտքը	\$5458
Երիտասարդաց Քրիստ. Ընկ.	
Անդամներու թիւը	465
Դրամական ընդհ. մուտքը	\$1586
Եզրայրակցութեանց	
Անդամք	145
Կիրակնօրեայ Դպրոց	
Աշակերտք	869
Երգիչ Խոււր	
Անդամք	244
Եկեղեցւոյ Ծէնքեր	
Անշարժ կալուածոց արժէք	
Եկեղեցի	\$454,000
Երիցատուն	30,500
	<hr/>
	\$484,500

ՊԻՒՏՃԷ

Ընդհանուր Մուտք \$67,652

Այս գումարէն	
Ժողովուրդը սուած է	\$49,627
Արտաքին ազդեցութիւն	10,631
Կանանց Օթանդակ Ընկերակցութիւններէ	5,458
Երիտասարդաց Քրիստ. Ընկերակցութիւններէ	1,186
Կիրակնօրեայ պրոցներէ	750
	<hr/>
Ընդհ. գումարը	\$67,652
Կատարուած է	
Մկրտութիւն	105
Պատկ	32

ՔԱԼԻՖՈՐՆԻՅԱԿԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՁԱԿԱՆ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

(EVANGELISTIC COMMITTEE OF CALIFORNIA)

Վեր. Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ	Ի Պատուով
ՏԻԿԻՆ Կ. Ա. ԿԵՐԹՄԷՆԵԱՆ	Ատենապետ
ՏԻԿԻՆ Յ. ՍԱՐԿԱՒԱԳ	Ատենադպիր
ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ՍՈՒՔԻՍԵԱՆ	Գանձապահ

ԾԱՆՕԹ. — 2-րդ էջի վարչութեան խմբակարին մէջ չկրցանք ունենալ անդամներէն Տեար Յ. Աշոտեանի լուսանկարը: Իսկ 3-րդ էջին վրայ վարչութեան անուանացանկին մէջ սխալմամբ դրուած չէ Տֆ. Ե. Հատիտեանի անունը:

ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ

- ՊՈՍՏՈՆ — Առաջին Հայ Աւետ. Եկեղեցի  
Տիկին Եղկիւլ Պապիկեան  
Մովսէս Նաճիկեան
- ՊՈՍՏՈՆ — Կիլիկեան Եկեղեցի  
Ասատուր Շամլեան  
Լուտեր Մակարեան
- ՓՐԱՎԻՏԷՆՍ — Եփրատ Եկեղեցի  
Յարութիւն Գրիգորեան  
Գրիգոր Նաճարեան
- ԼՈՐԷՆՍ — Բէթէլ Եկեղեցի  
Տիկ. Հ. Հիւսեան  
Տիկ. Փ. Ղազարոսեան
- ՍԷՅԼԸՄ ՏԻՓՕ — Արարատ Եկեղեցի  
Աւետիս Վարդանեան  
Օսկեան Ժամկոչեան
- ՈՒԷՍԹ ՆԻՒ ԵՈՐՔ — Երիցական Եկեղեցի  
Գրիգոր Գաբրիէլեան  
Տօքթ. Ն. Խ. Իշխանեան
- ՓԱԹԸՐՍԸՆ — Երիցական Միշըն  
Տիգրան Կէմէրէկեան
- ՏԻՓՐՕՅԹ — Հայ Աւետ. Եկեղեցի  
Մ. Հարիքեան  
Կ. Վարժապետեան
- ՈՒՍԹՐ — Մարտիրոսաց Եկեղեցի  
Գարեգին Բարսեղեան  
Գրասկ Նաճիկեան
- ՖԻԼԱՏԷԼՖԻԱ — Նահատակաց  
Յարութիւն Պէքէզեան
- ՆԻՒ ԵՈՐՔ — Հայ Աւետ. Եկեղեցի  
Տիկին Ա. Մինասեան  
Տիկին Գ. Նաճիկեան
- ԶԸԼՍԻ — Տիկ. Իսթէնտէրեան
- ԼԻՆ — Տիկ. Եսթեր Պոզոսեան

**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ  
ԴԱՇՏԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ**

**ՍՈՒՐԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆ**

Կը բաղկանայ 23 եկեղեցիներէ :

Եկեղեցւոյ անդամոց թիւը	1867
Ամէն կիրակի պաշտամանց ներկայ եղողներու թիւը	4000
Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներ	410*
Աղօթաժողովի եկողներ	823
Երիտ. Բրիստ. Ընկ. անդամներ	800
Դպրոցի աշակերտներ	2600
Ուսուցիչներ	27
Ուսուցչուհիներ	73

**ՖՐԱՆՍԱՅԻ ՄԻՈՒԹԻՒՆ**

Կը բաղկանայ 6 եկեղեցիներէ :

Անդամներու թիւը մօտաւորապէս	1500
Ամէն կիրակի պաշտամունքներ տեղի կ'ունենան 18 տեղերու մէջ :	

**ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ**

Ունի 3 եկեղեցի :

Աւետարանական համայնք	1500
----------------------	------

**ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԱՇՏ**

Եկեղեցիներու թիւը	5
Ժողովուրդի թիւը	1056
Եկեղեցւոյ անդամներունը	365
Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներու թիւ	550
Ք. Ջանից Ընկերակցութեան անդամոց թիւ	212
Օրական դպրոցներու աշակերտներու թիւ	700

**ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ**

Եկեղեցի	1
Ժողովուրդի թիւ	600
Անդամք	110
Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտք	83
Ք. Ջանից Ընկերակցութեան անդամոց թիւը անորոշ	

**Կ. ՊՈԼԻՍ**

Եկեղեցի	4
Միշըն	2
Ժողովուրդի համագումար թիւ	1400
Անդամակցութիւնը շուրջ	450
Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտք	անորոշ
Ք. Ջանից Ընկերակցութեան անդամք	անորոշ
Ցորեկուան դպրոց 1, աշակերտութիւն	265

**«ՆՈՐ ԱՒԵՏԱՔԵՐ»**

Սուրիոյ Հայ Աւետարանական Եկեղեցիներու պաշտօնաթերթը .

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ . տարեկան բաժնեգինը՝ Սուրիոյ համար 150 դրշ . Ս . արտասահման 1.50 տոլար :

Արտօնատէր վեր . Կ . Յ . Յարութիւնեան . Պատասխանատու խմբագիր՝ Տիգրան ձ . Խլոբեան : Հասցէ՝

**“Nor Avedaper”**  
B. P. 287, Alep, Syrie

**ԹՈՒԱՊԱՏԿԻ ՔԱԼՖՈՐՆԻՈՅ  
ՀԱՅ ԱԿԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ**

Քաղաք եւ Եկեղեցի	Հովիւ	Յարկ	Կարգ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	Յարկ	
Ֆրէճնո, ՊԱՆՏԵՏԱՅ	Վեր. Մ. Կ. Փափազեան	327	700	60	240	250	\$4500														
Ֆրէճնո, ԵՐԻՑԱԿԱՆ, ԱՌԱՋԻՆ	Վեր. Վ. Աւիրաթեան	300	700	60	250	300	\$4000														
ՓԱՍՏԻՆԸ, ԿԻՐԿԱՆ	Վեր. Ս. Մ. Բէճեպեան	53	300	20	35	60	\$1550														
ԼՈՍ ԱՆՃԷՂՍ, ՄԱՍԻՍ	Վեր. Ս. Մ. Բէճեպեան	76	400	25	36	80	\$1850														
»	» Գեթ. Սեմ. Անի	160	600	40	80	250	\$3500														
»	» ԷՄՄԱՆՈՒԷԼ	119	500	45	135	170	\$2800														
ՖԱՌՒԼՐ, ԱՌԱՋԻՆ	Աննովի	71	300	26	63	70	\$1050														
ՓԱՐԼԻՐ, ԶԻՓԵՆՆԱՅ	Վեր. Պ. Մ. Կարապետեան	25	150	20	70	65	\$600														
ՕՔԼԷՆՏ, ԲԵՓԱՆԻԱ	Վեր. Վ. Հ. Եսայեան	76	250	30	60	110	\$2280														
ՄԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ, ԳՈՂԳՈՐԱ	Վեր. Ե. Ք. Ռշտունի	79	250	45	28	40	\$2700														
ԳԻՆՊՊՐԿ, ՄԱՐՏԻՐՈՍԱՅ	Վեր. Ս. Ենովեան	30	100	15	40	45	\$600														
ԵՂԵՄ, ԵՐԻՑԱԿԱՆ	Վեր. Ա. Վարդանեան	20	—	—	25	40	\$500														
	Ընդ. գումար	1336	4250	295	1003	1535	\$25,830														

**ՀԱՌԱԳԱՅԹԻՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼԷՆ**

ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հայաստանեայց Աւետարանական առաջին եկեղեցին կազմուեցաւ պատշաճ արարողութիւնով մը 1846, Յուլիս 1-ին Բերա, Կ. Պոլիս, 40 անդամներով, որոնցմէ 37-ը այր եւ 3-ը կին էին:

Այդ առթիւ երգուեցաւ «Եկեղեցիդ ընդհանրական որ քո սիրոյդ է առարկայ» երգը, եւ ապա Աւետարանական շարժման հետեւողները որք ցարդ «Բարեպաշտութեան Միաբանութիւն» կ'անուանուէին, կոչուեցան ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

Հովիւի Ընտրութիւն

Պատմական այս պաշտամունքէն 20 վայրկեան յետոյ կը դումարուի եկեղեցական առաջին գործի ժողովը եւ կը կատարուի պաշտօնէութեան ընտրութիւն եւ զազանի ու միաձայն քուէով իբրեւ Հովիւ կ'ընտրուի ՊԱՏ. ԱՐԻՍՏՂՈՍ Խ. ԻԻԹԻԻՃԵԱՆ:

Միեւնոյն ժողովին մէջ կ'ընտրուին նաեւ երկու հոգարարձուներ եւ երկու սարկաւազներ:

Առաջին Ձեռնադրութիւն

Նորընտիր Հովիւի ձեռնադրութեան յուզիչ պաշտամունքը տեղի կ'ունենայ 1846, Յուլիս 8-ին, մեծ հանդիսաւորութեամբ:

Այսպէս ուրեմն Վեր. Արիստղոմ Խ. Իւթիւճեան կ'ըլլայ Հայաստանեայց Առաջին Աւետարանական Եկեղեցիի անդրանիկ ձեռնադրեալ Հովիւը:

Վեր. Իւթիւճեան նախ քան Աւետարանական շարժման յարիւր, Կ. Պոլսոյ Պատրիարքական Մայր Եկեղեց-

ւոյ երաժշտապետն էր որ ապա ճէզայիրլեան Ամիրայի ձեռամբ Խասդիւղի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյ դպիրնե-  
րու դասոյն ձայնագրութեան դասատու եւ եկեղեցիին  
դպրապետ կարգուեցաւ :

Իր Աւետարանականութեան յարիւր եղաւ 1840 թը-  
ւականին Վարդապետի Տօնին ի ձեռն Խասդիւղի Եղնիկ  
Տէր Վրթանէս Քահանայի : Տէր Վրթանէս Քահանան  
Արծրունի Տէր Գէորգ Քահանայի եւ ուրիշներու հետ  
Աւետարանական շարժման վարիչներն էին :

### ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐ

Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիներու հո-  
վիւններու անդրանիկ ժողովը տեղի ունեցաւ 1850, Մա-  
յիսին, որ տեւեց հինգ օր :

Առաջին միախոնարը որ Թուրքիա զրկուած է Հայոց  
մէջ գործելու համար եղած է Մր. Ուրիլիմ Կուտէլ :

### ԱՆԳՐԱՆԻԿ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ Ս. ՀԱՂՈՐԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ

Առաջին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ անդրանիկ  
Հաղորդութեան Ս. Խորհուրդի մատակարարումը տեղի  
ունեցաւ 1845, Մարտ 4-ին :

### ԳՐԱԲԱՐ Ս. ԳՐՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Ներսէս Եպիսկո-  
պոս Վարժապետեանի մասնաւոր խնդրանքով Ամերիկա-  
յի եւ Երիտանական Աստուածաշունչի Ընկերութիւնները  
1897-ին կը ձեռնարկեն գրարար Աստուածաշունչի եւս  
տպագրութեան, ինչպէս կ'ընէին արդէն աշխարհարար  
Աստուածաշունչին, Կանոնականէ դուրս եղած գիրքերու  
զանց առնուելու համաձայնութեամբ :

### ԷՋ ՄԸ «ԾԱԳՈՒՄՆ ԵՒ ԸՆԹԱՑՔ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀԱՅՍ» ԱՆՈՒՆ ԳԻՐՔԷՆ

Ի մօտոյ Ս. Էջմիածնի Արարատ անուն ամսագրին  
մէջ Նորագիւտ Ձեռագիր ըսուած հրատարակութիւն մը  
տեսնուեցաւ, որ նաեւ իրր առանձին տետրակ ալ կազ-  
մըւած է «Երանելի Հայր Անանայի Գիր Խոստովանու-  
թեան Յաղագս Սուտ Կարծեաց որ վասն Նորայ» վերնա-  
գիրով : Մենք պատշաճ սեպեցինք առանց անոր վրայ  
բառ մը կամ կէտ մը աւելցնելու, նոյնութեամբ ընդօրի-  
նակել... ինչ որ հրատարակուած տեսանք Արեւելք օրա-  
թերթին մէջ «Հին Բայց Նոր» մակագրով :

«Իրաւունք ունինք», կ'ըսէ խմբագիրը, «այս վեր-  
նագրին տակ հրատարակել կրօնական պատմութեան քա-  
նի մը տեղեկութիւններ որք շատ հին ըլլալով հանդերձ՝  
կրնան նորութիւն համարուիլ մեր ընթերցողներէն շա-  
տերուն :

Մեր պատմութեան ուսուցիչները մեծ խնամքով կը  
զգուշանան բան մը ըսել իրենց աշակերտներուն ի մասին  
կրօնական շարժումի մը, որ ազգային մտքի ուղղութեա-  
նը գլխաւոր յայտարարներէն մէկն է, շարժում, որ մեծ  
փոփոխութիւն յառաջ պիտի բերէր մեր եկեղեցական  
կեանքի կազմակերպութեան մէջ եւ մեծ ազդեցութիւն  
պիտի ունենար մեր հոգեկան կրթութեան վրայ, եթէ  
սարսափելի դէպքեր չմեռցնէին այդ շարժումը... :

«Արեւելքի մէջ ծագած ազանդներէն մաս-  
նաւորապէս ուշադրութեան արժանի է Պաւլիկեան Ա-  
ղանդէն յետոյ, որ դոյութիւն ունէր եօթներորդ դա-  
րուն, անոր յաջորդող Թոնտրակեցիներու Աղանդը (շար-  
ժում) որուն ծագման ճիշտ ժամանակը յայտնի չէ, բայց  
կ'երեւի թէ Յովհաննէս Օվայեցի Կաթողիկոսի օրովն է,  
իններորդ դարու առաջին կէսէն, այսինքն 800 թուակա-

նէն եւ տեւած է մինչեւ մետասաներորդ դարու երկրորդ կէսն, ամբողջ երկու դար: Այդ աղանդը օտարամուտ չէր, այլ բուն իսկ Հայոց ապրած հողին վրայ ծագած եւ ծնած էր: Ուշադրութեան արժանի է կ'ըսէ միաբանը, որ հայկական մտքի ունէ արտադրութիւն երբեք չունեցաւ քիչ թէ շատ ազդեցութիւն Հայոց շրջանէն դուրս, այդ շրջանակին մէջ հաշուելով Անդրկովկասը, Վրաստանը ու Աղուանք, ուրիշ քանի մը մասնը ցեղերու հետ: Միակ բացառութիւնը որ կայ, Թոնտրակեցոց Աղանդն է: Այդ աղանդը թէպէտ հակաուղղափառական մտածութիւն, սակայն հայկական մտածութեան միակ արտադրութիւնն է որ դուրս ելլելով Հայոց բնական սահմաններէն, տարածուեցաւ հեռուն, Փոքր Ասիա, Միջագետք, Պալքանեան Թերակղզիք, մասնաւորաբար Պուլկարիա, Միջին Եւրոպա, Հիւսիսային Իտալիա եւ Հարաւային Ֆրանսա: Թոնտրակեցիներու այդ շարժումը ահագին նշանակութիւն ստացաւ մարդկային ընդհանուր պատմութեան մէջ:

«Թոնտրակեցիներու Աղանդը Բողոքականութեան նախահայրն է, այդ աղանդ չէր ընդունել արտաքին ձեւակերպութիւններ, կը մերժէր պատկեր, մասունք եւն. . . . Աղանդն իր անունը կ'առնու Թոնտրակ աւանէն ուր եղած է իր ծագումը, եւ անկէ կը տարածուի Թուրքի, Խնուս, Դերջան եւ ուրիշ տեղեր, ամէն կողմ այն անունը կ'առնէ ուր կը գտնուի:

«Այդ աղանդի տարածիչ երեւցող առաջին անձն է Մփրատ Զարեհաւանցի, որ ահագին բանակ մը կ'ունենայ իր ետեւէն: Երկու դար շարունակ ամբողջ հայ ազգը կը բաժնուի ձերկու մասերու, միտքերը վրդովուած են: Մէկ կողմէն կը պաշտպանուէր ուղղափառութիւնը ոչ միայն խօսքով, քարոզութեամբ, այլ եւ բռնի ուժով: Դահիճ, կախաղան, խարան, հուր, ջուր, ամենայն սպանիչ զօրութիւն ի դորձ կը դրուէր, սակայն երանական հաւատք մըն էր Թոնտրակեցիներու սաղափարը:

. . . «Մաքիստրոս կը կարծէր որ տմարդի հայածանքներ վերջ դրին այդ աղանդին, սակայն ո՛չ հալածանք, ոչ ալ աստուածարանական վիճարանութիւնք կրցան քանդել, ջնջել Թոնտրակեցիներու Աղանդը:

Թաթարական արշաւանքներն իրենց հեղեղներու ներքեւ ծածկեցին նաեւ այդ աղանդն ալ: Հայերը ժամանակ չունեցան այլեւս աստուածարանական կրօնական խնդիրներով զբաղելու, սակայն, այդ աղանդին հետեւող իրենց պաշտպան իշխաններուն հետ տեղափոխուեցան դէպի Արեւմուտք, Ասորեստան եւ մասնաւորապէս Պուլկարիա: Այս վերջինը եղաւ երկրորդ հայրենիք այդ աղանդին որ հոն կոչուեցաւ Փոքրմիլեան Աղանդ, Փոքրմիլ անուն քահանայի մը առաջնորդութեամբ:

Միջին Եւրոպայի մէջ Կաթարացիք շարունակեցին այդ աղանդը, իսկ Հարաւային Ֆրանսայի մէջ՝ Ալպի-ժուայք (Վալտենք կամ Վալտենցիք):

Այսպէս, ուրեմն կ'ըսէ միաբան, բարեկարգութեան այսինքն Բողոքական Աւետարանական Եկեղեցիներու բուն նախահայրն: ու հիմնադիրը Հայոց բնակած գաւառներէն ելաւ: Պէտք է ուրեմն անաչտութեամբ, առանց մոլեռանդութեան ուսումնասիրել ատոնց պատմութիւնը, ոչ միայն իրրեւ լրացուցիչ մաս Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան, այլ եւ իրրեւ հայ հոգեւոր-մըտաւոր կեանքի ինքնուրոյն արտայայտութիւն, նշանաւոր իր հետեւութիւններով»:



## «ՅԱՂԹԱՆԱԿ ԶՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Հայաստանեայց Աւետարանական Առաջին Եկեղեցիի կազմութիւնը Աւետարանական Հայերը կոչած, են «ՅԱՂ-ԹԱՆԱԿ ԶՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ», որպէս կը տեսնուի հետեւ-եալ գեղեցկաշար երգով:

Պանծացի այսօր Հայկազեան տոհմին հայրենի գաւառ,  
Զի անդ երկնատափ շողէ համապիւռ լոյս հրաշափառ:  
Անդ նշմարտափայլ Արփեհունյն արդար նշոյլ անսպառ,  
Ի բաց վտարէ կանխակալ դատմանց զաղջամուղջ յամառ:  
Անդ քառավտակ կենսաճիր Աղբիւր ջուր հոգեպարար,  
Մտացածին գիւտփ եւ աւանդութեանց վարագոյր անփառ:  
Նորաշուփ պննէ մտավարժ մանկան զոգեկան տանար:  
Զի մի ծածկեցցեն Բանին Աստուծոյ զոգեհարոգ ցառ,  
Նա մի համագօր պատուեսցի երբեք ի դարուց ի դար,  
Բանն Աստուածեղէն եւ հողածընաց բան դիւրամոլար:  
Մի գուգակշիռ փառս ընկալցի մահացուաց կանառ,  
Ընդ ամենաստեղծ անմահն Աստուծոյ որ է լոյս անհառ:  
Եւ մի պարծեսցի մարմին հողանիւք յարդիւնս անկատար,  
Եկ այսուհետեւ Յիսուս լիցի մեզ հովիւ հանրական,  
Կանոն լիցի մեզ նորին անսխալ բան նշմարտութեան:  
Եւ ծաւալեսցի սուրբ եկեղեցին համաշխարհական:  
Թող քարոզեսցի մինչ ի ծագս երկրի Սուրբ Աւետարան,  
Զի սա հաստատի անյողողող հիմամբ ի վէմն անկեան,  
Յորմէ փշրեսցի ոգի աաշխարհիս եւ կըրից արձան:  
Զօրացի ի սմա Հոգին Բրիստոսի գերդ գէն յաղթութեան,  
Զի յաղթո՛ղ լիցի աստուածամարտից թշնամեաց համայն:  
Սովաւ տեսցուփ մեք զանմահ քաղցրութիւն դասուն ընտ-  
րական,  
Եւ մշտագուարն ցնծացուփ յերկնից սուրբ արքայու-  
թեան:

Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան 30-րդ Համաժողովի մէջ տրուած կարեւոր մէկ որոշումը.—

1) Ի դէպ մեր եկեղեցիներու կազմալուծման՝ որոշուեցաւ հետեւեալ բանաձեւը յանձնարարել եկեղեցիներուն որդեգրելու, իրենց եկեղեցապատկան կալուածները ապահովելու մնայուն նպատակի մը համար.

“In the event the membership of this corporation (congregation) becomes less than ten persons, or if this corporation should own a church and religious services therein should cease for a period of two years, then this corporation shall be deemed dissolved and the assets thereof, both real and personal property, shall belong to and become the property of the Armenian Missionary Association of America.”

Աւետարանական Միութիւնը օրինականապէս incorporate ընելու համար, Գործադիր Մարմինս պաշտօնական անհրաժեշտ քայլը առած է արդէն, եւ կը հաւատանք թէ մինչ յառաջիկայ Տարեժողովի գումարումը անիկա իրականացած պիտի լինի:

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

### Ճ Ա Շ

Ճաշերը պիտի տրուին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ, Հինգշաբթի կէսօրին, Ուրբաթ կէսօրին եւ երեկոյ:

Ճաշագինը մարդ գլուխ 40 սէնթ է:

Ճաշատոմսերը կը խնդրուի կանխաւ գնել Արձանագրիչէն:

### ԲԱՅՕԹԵԱՅ ՃԱՇ

Շարաթ կէսօրուան ճաշը պիտի ըլլայ բացօթեայ եւ տեղի պիտի ունենայ քաղաքի գեղեցիկ փարքերէն Chestnut Grove, Green Hill Park-ին մէջ: Փոխադրութեան համար մասնաւոր կարգադրութիւն եղած է հիւրընկալ եկեղեցիի կողմէն:

### ՊԷՆՔՈՒԻԹ

Շարաթ երեկոյ եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի պիտի ունենայ պէմֆուիք:

Մասնաւոր յայտագիր:

Ճաշագինը մարդ գլուխ 50 սէնթ է:

### ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳՐՔՈՅԿ-ՅԱՅՏԱԳԻՐ

Մեր Միութեան եկեղեցիներու խրաքանչիւր անդամը լիայոյս ենք թէ հաճոյքով պիտի ուզէ գնել օրինակ մը այս Տարեգիրք-Բրօկրամէն որը իր մէջ կ'ամփոփէ Տարեթողովի ամբողջական յայտագիրներէն զատ նաեւ մեր եկեղեցիներու ընդհանուր դործունէութեանց ամփոփ նկարագրականը՝ պատկերներով, ինչպէս նաեւ այլ շահեկան տեղեկութիւններով հանդերձ:

Գրքոյիկին գինն է միայն 25 սէնթ, որմէ գոյացած հասոյթը պիտի յատկացուի սպաւազրական ծախսերու եւ աւելցածը՝ Աւետարանական Միութեան գանձուն:

ԳԻՆ 25 ՍԷՆԹ